

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային - Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ
ՆԻՍՏ Ը

10 ՕԳՈՍՏՈՍ 1879



Կ. ՊՕԼԵՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

11 Գոմ-Գաբա, Պատրիարքարանի փողոց 11

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՅ

ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Արեւիկայի
Տիգրան էֆէնտի Եւսուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեւէմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւիկայի
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Չեռնասուբեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Յովհաննէս Բահանայ Մկրեան
Տիգրան էֆէնտի Եւսուֆեան

Գաստիսկուբեան դիւան

Սերփիլէն էֆէնտի Արեւիկայի
Ռէֆէս էֆէնտի Պէրպէրեան
Գասպար էֆէնտի Չէրազ

Կարաւաճոց դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Յրիկ էֆէնտի Ռենճեան Արեւիկայի

Համարակալութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափազեան
Քրիստոստուր էֆ. Ղազարուեան Արեւիկայի
Համարձուժ էֆէնտի Մազպուլեան

Երևանի յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարուեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Յարաբերութեան դիւան

Մկրտիչ էֆէնտի Էսաեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Պօղոս էֆէնտի Պառնասեան

Երասուբեան դիւան

Ներսէս վարդապետ Ասլանեան
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի
Նշան էֆէնտի Օտեան

Նախաձեռնութեան դիւան

Տարթու Ռափայէլեան էֆէնտի
Յարութիւն էֆ. Մէրեւէմ-Գուլի Արեւիկայի
Միհրան էֆէնտի Չօպանեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Խլթիւճեան Արեւիկայի
Գարեգին էֆէնտի Մելիքեան
Համարձուժ էֆէնտի Ալաճաճեան

Ա Ա Չ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ը

40 ՕԳՈՍՏՈՍ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Ամեն Տ. Ներսէս Արքազան Պատրիարք
ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան փաշա Ասլանեան

Ա Ա Չ Ա Յ Ի Ն Ե Ր Ե Ս Փ Ո Ւ Ա Ն Ք

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ՄԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ (Ա. Վ. Իճակ)	47 Յ. Շիշմանեան Տօրթօր
Ա. Վ. Իճակ	Գումգաբու, Կետիկ փաշա Է. Գումգաբուի դուրս	48 Իսկիւտար Ս. Կարապետ
1 Կարապետ Եպս. Սերոբեան Բ	21 Գրիգոր Պէրպէրեան Բ	49 Միհրան Պահճէղափուլեան
2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. Պ	22 Գէորգ Ստիմարաճեան	50 Պօղոս Թորգոմեան Բ
3	23 Խաչիկ Մանկասարեան Բ Պ	51 Նիկողոս Ալաճաճեան
4	24 Կարապետ Աղաբաճաճեան	52 Տրդատ Փափազեան
Բ. Վ. Իճակ	25 Համբարձում Մազպուլեան	(Գ. Վ. Իճակ)
5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան	26 Մինաս Գափամաճեան	Գասպար փաշա
6 Պօղոս Վ. Խօրտամեան	27 Յովհաննէս Պոյաճեան Բ Պ	53 Գասպար Չէրազ
7 Յովհաննէս Բ. Մկրեան	28 Ն. Մէլիքեան Տօրթօր Բ	Բերա
8 Գրիգոր » Աճէմեան	29 Պօղոս Պառնասեան	54 Արիկ Ռենճեան
Գ. Վ. Իճակ	30 Սարգիս Աղաբէկեան Բ Պ	55 Գրիգոր Ալթիմէճեան Բ
9 Վահան Վ. Տ. Մինասեան Բ Պ	31 Սահակ Ապրօ	56 Գրիգոր Օտեան
10 Յակոբ » Ա. Փափազեան	32 Սենեքերիմ Մանուկեան Բ	57 Սերփիլէն
11 Սահակ Բ. Տ. Սարգսեան	33 Բարթող Քիւրքճիւղաշեան	58 Ռափայէլեան Տօրթօր Բ
12 Խորէն » Փէշիվանեան	34 Առովմ Տէրոյէնց	59 Միքայէլ Մօմճեան
Գ. Վ. Իճակ	35 Գէորգ Ապտուլաճեան	60 Կարապետ Քազաղեան
13 Ներսէս Վ. Ասլանեան	36 Յ. Մէրեւէմ-Գուլի	61
14 Յուրիան Բ. Ստեփանեան Բ	37 Աւետիս Կիրտաղեան Բ	62
15 Յարութիւն Սերոբեան	(Բ. Վ. Իճակ)	Միջագիւղ
16	Պէշիկբաշ	63 Յակոբ Նորատուկեան
Ե. Վ. Իճակ	38 Անդրանիկ Կրճիկեան Բ	64 Տիգրան Եւսուֆեան
17 Խորէն Արք. Նար Պէյ	39 Ալիքսան Խօրտամճեան	65 Մկրտիչ Գաղանճեան
18 Յովհաննէս Վ. Փափազեան Բ	40 Բարսեղ Հալաճեան	66 Աւետիս Գօլթեան
19 Խորէն » Կիւրոյեանց Բ Պ	Եկնիգաբու.	67 Նշան Օտեան Բ
20 Գարեգին » Թաթարեան	41 Մկրտիչ Քիւրքճիւղաշեան Բ	Պէյգօզ Է. Ղալաբիա
Բ. Բացակայութիւն առաջին :	42 Սեպուհ Մազաուտեան	68
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :	43	(Գ. Վ. Իճակ)
Բ. 3 Բացակայութիւն երրորդ :	44	Ղուգղուսնուր Է. Իճակ
Բ. 4 Բացակայութիւն չորրորդ :	45 Սիմօն Ֆէլէկեան	69 Յովհաննէս Էսաեան
Բ. 5 Բացակայութիւն հինգերորդ :	46 Ստեփան Ասլանեան	70 Ստեփան Պէշիկճեան

Գատըգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետեան Բ	Կարին	121 Ստեփան Փափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան		Տիվրիկ
Նարլըգաբու	101 Սիմոն Մազուտեան Բ 2	122 Նշան Գարազա
73 Յակոբ Եփնէնիճեան	Քեօբանեա	Զեյրուն Է. Մարաշ
Եննիմանայի Սամարիոյ	102 Մ. Փափաղեան Տօբթօր	123
74 Պօղոս Մկրտիչեան	Աղբիւնուպօլիս	Տրասլիգօն
Թօփգափու	103 Վիչէն Ապուսլաճ	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիս	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիս Է. Ս.	104 Կ. Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Խակէնաբեան Բ
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Աւետիս Պարոնեան	126 Մինրան Զօպանեան
Գուրուչեշմէ	Ղարանիսար	Վան
77 Ասափա Իկիտպաշեան Բ	106	127
Հիսար Է. Պօլաճի գիւղ	Արաբկեր	Աղբամար
78	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր գիւղ Է. Սբէնիս	Բաղէշ	Հայեպ Է. Այնքապ
9 Ղազար Հովուեան	108	129
Պալատ	Պրուսա	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսսեան	109 Քրիստոստօր Ղազարոսեան Բ	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Յովհաննէս Կրճիկեան Բ	Եւդոկիս	Թուսճուխ
82	110	131
Քարակեօմրիկ	Ամասիա	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ	111 Համբարձում Ալաճաճեան Բ	132 Աբրահամ Յ. Այվաղեան
84	Բայու	Զմշկաձագ
(Ե. Վիճակ)	112 Յովհաննէս Աղնաւորեան	133 Համբարձում Սարըբէշիչեան
Սամարիա	Եղեսիա	Գաղատիս
75 Ալիքսան Պէշիբեան	113 Յակոբ Իւթիւճեան Բ 2	134
88 Եղիազար Մէլիքեան Բ	Մանճըլլիս	Ատանա
86 Մինաս Ճաֆճաֆեան	114	135
88 Նազարէթ Շահապետեան Բ	Հանճն	Սըղերդ
89 Յարութիւն Թիւրեան	115	136 Մատթէոս Ալէքսան
90 Յակոբ Արշակ Բ	Երզնկա	Եօզդատ
91	116 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան
92	Թիքիբտաղ	Մալաբիս
93	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորդ Վարդանեան
94	Կեսարիա	Իզմիր
Խասգիւղ	118 Գէորդ Գըլճեան	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքիւն	Խարբերդ	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէլիկեան	119	140
97 Սարգիս Աբրահամեան Բ	Պալքրեսեր	
98 Մ. Արծրունի Տօբթօր Բ		
99 Սարգիս Քալուքեան Բ		
100 Աթանազիոս Արապեան Բ	120	

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Խնդիր Ազգային ուղղակի արոյ . — Վիճարանութիւն ի վերայ Համարակալութեան դիւանի տեղեկագրոյն :

Բ. Խնդիր Վերաբնութեան Սահմանադրութեան . — Վիճարանութիւն ի վերայ Նախաձեռնութեան դիւանի տեղեկագրոյն :

Գ. Խնդիր Ղալաթիոյ թաղեցւոյ . — Վիճարանութիւն ի վերայ տեղեկագրոյ Մայր Դիւանի :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹ՝ ԻՆՔ

Ընդ Նախագահութեանը . Ամենապատիւ Տ. Ներսէս Աբրահամ Պատրիարք Հօր՝ որ թէպէտ Պատրիարքական աթոռը չէր բազմած բայց ներկայ էր ժողովին սկիզբէն եւ ընդ Ատենապետութեամբ Ստեփան փաշայի Ասլանեան . Ատենաբարացուեցաւ ժամ 7 ին ի ներկայութեան 54 երեսօր փանաց , որոց թիւն 73 ի յանգեցաւ ի վերջէ :

Ժողովոյ նախընթաց Զ. նիստին , որ դոճիակ տեղի ունեցաւ , դոճիաց մասի ատենագրութիւնը տպեալ հաղորդուած է արդէն երեսփոխանաց , եւ անվաւեր կը մնայ դեռ , ինչպէս նաեւ վերջին է . նիստի ատենագրութիւնըն , ի դիտողութիւն հրատարակեց զերեսփոխանս՝ նախ Զ. նիստի ատենագրութեան վրայ :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՅ . — Կը տեսնեմ որ այդ ատենագրութեան մէջ , երես 134 , իմ անունըս յիշուեր է բացակայ երեսփոխանաց չարքին մէջ , մինչդեռ ներկայ էի նոյն նիստին եւ ես ինքս էի որ Եուսուֆեան էֆէնտի բացակայութեան լուրը հաղորդեցի ժողովոյ :

Վաւերացումն նախընթաց Զ. եւ է. նիստերու ատենագրութեանց

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ . — Երես 133 , սխալակ երկրորդ , իմ անունս նշանակուեր է ընդ Ատենապետ փաշան յայտարարելով թէ փոթութեամբ . Իւթիւճեան Յակոբ էֆէնտի

անուան տեղ , որ առաջարկութեան մը ձայնակիցն եղած է :

ԱՏԵՆԱՊԵՐ ԷՖ. — Այո՛ , տպագրական վրիպակ մ' է այդ , որով երկու անուններու սկզբնատառերն ընդ իրեարս շփոթեր են :

Ուրիշ գիտողութիւն տեղի չունենար , հետեւապէս Ատենապետ փաշան քուէի կենթարկէ Զ. նիստի ատենագրութիւնն եւ ժողովը ընդունելով միաձայն կ'ը Ա.Ա.Բ.Բ.Ա.Յ.Ն.Ն.Ն.Ն. զայն եղած գիտողութիւններով հանդերձ :

Յետոյ Ատենապետ փաշան է. նիստի ատենագրութիւնը գիտողութեան կենթարկէ , սակայն որ եւ է գիտողութիւն տեղի չունենար երեսփոխանաց կողմէ :

ԱՏԵՆԱՊԵՐ ՓԱՇԱ . — Ըստ որում գիտողութիւն ընող չկայ , կը ներէք ուրեմն որ բացատրութիւն տամ ձեզ ինձ վերաբերեալ այն կէտին համար , որ է. նիստին մէջ , յորմէ դժբաղդարար բացակայ մնալու բռնագատուեցայ , յուզուեր է Գ. նիստի ատենագրութեան վաւերացմանն առթիւ , եւ զիւանը վերապահեր է զայս իմ ներկայութեանս օրուան , Այդ Գ. նիստին մէջ , ինչպէս կը յիշէք , երբ ժողովը իւր ներքին կանոնադրին իբր յաւելուած առաջարկեալ եօթն յօդուածները կը քննէր , հարցման եւ հարցապնդման խնդրոյն վերաբերող Ե. յօդուածը նիւթին կարեւորութեանն եւ փափկութեանը համար աւելի լուսաւոր եւ մանրամասն բացատրութեան կարօտ թուեցաւ ինձ , եւ իբր հեղինակ առաջարկութեան բնին ելնելով երկարօրէն մեկնեցի հարցման եւ հարցապնդման կանոնաց ոգին , տարբերութիւնները եւ պայմանները . վերջը բացատրութիւններն ամիոփեցի հինգ նորագոյն յօդուածոց մէջ , եւ ներկայեցի ժողովոյն ուշադրութեան , որ անոնց ընդունելութիւնը քուէարկեց , իբր վերաքննութիւն ներքին կանոնադրին 82 եւ 83 յօդուածոց , եւ իբր բացատրութիւն առաջարկեալ յաւելուածական Ե. յօդուածին : Ուրիշ կէս մ'ալ կայ ուղղելի :

Այդ յաւելուածական յօդուածոց առաջնոյն վերջը գրուած է « Իսկ հարցասինդումը քննագատական ձգտում ունի եւ պատասխանը մինչեւ տարուան մը համարատուութիւն է » : Այս տեղ « մինչեւ տարուան մը » բառերը պիտի ըլլան « մինչեւ աստիճան մը » եւ այն ատեն իմաստը կը ճշդուի :

Ատենապետ փաշան այս բացատրութիւնները տալէ ետեւ՝ քուէի կենթարկէ է. նիստի ատենագրութիւնն եւ ժողովը միաձայն ընդունելով կ'ը Ա.Ա.Բ.Բ.Ա.Յ.Ն.Ն. զայն :

2.

Բացակայութիւն

Երեսփոխաններէն Սարգիս էֆէնտի Գավուքճեան գրով ծանուցած ինելով թէ ճանապարհորդութեան պատճառաւ առժամանակ մը բացակայ պիտի մնայ ժողովոյ նիստին , Ատենապետ փաշան անոր բացակայութիւնն իբր կանոնաւոր արձանագրել տուաւ ներկայութեան տուժարին մէջ :

3.

Տիգրանակերտի նախորդ Առաջնորդ Տ. Փիլիպպոս եպիսկոպոսի բողոքագիրը .

Փիլիպպոս եպիսկոպոսի կողմէ վարչութեան դէմ՝ առ Ազգ. ժողովն մատուցեալ յետագայ բողոքագիրը կարդացուեցաւ ,

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր , եւ վսեմափայլ Տէր Ատենապետ Ազգային Ընդհանուր Ժողովոյ .

Ի Տիգրանակերտ իբրեւ փոխ առաջնորդ եւ Սահմանադրութեան դործադիր

կարգուելով , ինձ յանձնուած պաշտօնը խղճի մտօք կատարելէս ղկնի , ըստ օրինի առաջնորդ ընտրուեցոյց դաւառական Ընդհանուր Ժողովոյ քուէից բացաճակ առաւելութեամբ եւ վիճակայնոցս հաճութեամբ եպիսկոպոսական բարձր տատիճանին արժանանալու պատիւն ունեցայ նոյն վիճակին վրայ , ըստ օրինի նախնեաց Մինչդեռ ես իբր ճշմարիտ հովիւ ինձ յանձնուած հոտին համար ամեն վրտանդ ամեններգութիւն եւ ինչ յանձն առած կը նահատակուէի եւ շարունակ թշուառ ժողովրդեան արդար իրաւունքները կը պաշտպանէի , որով տեղական կառավարութեան անսխորժ եւ անհաճոյ եղած էի այնպէս որ միշտ զրպարտական գանգատներ կը տեղար առ Բ. Գուռն :

Եւ մինչդեռ ես կսպասէի որ վարչութեան կողմէն ինձ ձեռնառութիւն եւ քաջալերական խրատոյցս լինի , յանկարծ Ազգ. կեդր. վարչութեան կողմէն քննիչներ զրկուեցան ի Տիգրանակերտ Գարեգին վարդապետ եւ Պոյաճեան Յովհաննէս էֆէնտի , յետ այնորիկ ինձ անծանօթ պատճառներով եւ չեմ գիտեր ի՞նչ ամբաստանութեամբ Ազգ. վարչութեան խառն ժողովը հեռադրով զիս առաջնորդութենէ դադարեալ հրապարակեց , եւ թոյլ տուաւ որ տեղական վարչութիւնը իւր նախնի կիրքը յազեցունելու նպատակաւ զիս յանկարծ 50-60 ոստիկանական զինուորներով ի հաճոյս նաև տեղական կառավարութեան իմ վիճակէս արտաքսէ ամենայն անարգութեամբ ինչպէս եղաւ :

Մինչդեռ թէ եկեղեցական օրէնքը եւ թէ Սահմանադրութիւնը այնպէս կը տըրամագրեն որ իմ յանցանքներս (եթէ ունիմ) պէտք էր առաջ քննել օրինաւոր

րապէս եւ յանցանքներս հաստատուելէն զինի հրապարակել եւ եթէ պաշտօնանկ լինելու չափ ծանր լինէին ըստ եկեղեցւոյ օրինաց եւ ըստ Սահմանադրութեան տրամադրութեանը վիճակէս հեռացունէր եւ ըստ յանցանցս զրկեալ ի վիճակային իրաւանց մի վանք զրկէր ապաշաւելու :

Եւ որովհետեւ այս օրինաւորութեանց եւ ոչ մէկը ի դործ դրած է վարչութիւնը՝ յանուն արդարութեան , յանուն եկեղեցւոյ օրինաց , յանուն Սահմանադրութեան եւ յանուն այն խղճալի վիճակիս ողորմելի կացութեանը որու վարչութիւնն իւր անխորհուրդ եւ անհեռատես ընթացքովս պատճառ եղած է , յատենի Ընդհանուր Ժողովոյ կեդրոնական վարչութեան դէմ կը բողոքեմ եւ ինձ եղած անարգանաց եւ զրկանաց հատուցում կը պահանջեմ :

Փիլիպպոս եպիսկոպոս Խ. Նաճառեանց 1879 Օգոստոս 10 ի Պատրիարքարան Հայոց

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՐ ՓԱՇԱ . — Կանոնը կը տրամադրէ որ հասարակութեան եւ այն ամէն անձանց կողմէ՝ որ երեսփոխան չեն , առ Ազգ. ժողովն ուղղեալ որ եւ է գիր . բողոքագիր կամ աղերսագիր , Յարաբերութեան զիւանին յղուի ի նախաքննութիւն :

Սոյն զիւանի անգամներն են , Մկրտիչ էֆէնտի Էսսեան Բարսեղ էֆէնտի Հալաճեան Պօղոս էֆէնտի Պառնասեան ,

բայց թէ ո՞վ է ատենապետը , դեռ չհաճեցան մեզ ծանուցանել , թէ եւ բանի անգամներ բոլոր այն զիւանաց , որ չէին ընտրած իրենց

ատենապետները, հրաւեր ուղղեցինք որ փոթանցեն այս ընտրութիւնն եւ հաղորդեն մեզ արդիւնքն: Ինչ որ է, այժմ հարկ է մեզ ըստ կանոնի սոյն գիրը Յարաբերութեան դիւանին յղել: Ուստի կը յանձնեմք զայն Էստեան էֆէնտիի, եւ եթէ կը հաճիք պայման եւս կը նշանակենք որ Յարաբերութեան դիւանը մինչեւ 15 օր չնորհ ընէ բերել մեզ իւր նախաքննութեան անդեկագիրը:

ՉԱՅՆԵՐ. — Շատ աղէկ, կընդունինք:

Ժողովը կը հաւանի եւ Ատենապետ փաշան կը ՅՂԷ բողոքագիրը Յարաբերութեան դիւանին նշանակեալ պայմանաւ:

4.

Խաղաղի Տ. Երեմիա բանաւանյի աղերսագիրը:

Տ. Երեմիա քահանային կողմէ՝ Օրացոյցի տպագրութեան մենաչնորհի խնդրոյն վրայ առ Ազգ. Ժողովն ուղղեալ յետագայ աղերսագիրը կարգացուեցաւ:

Պատրիարքական Արժանավայել փոխանորդ Գերապատիւ Տ. Մատթէոս Արքազան Արքեպիսկոպոս բարեխնամ Ս. Հայր, եւ Ազգային Ընդհանուր Ժողովոյ գերամեծար Ատենապետ Վսեմափայլ Մտեփան փաշա արդարակորով Տէր:

Բաւական տարիներէ ի վեր տարեկան Օրացոյցի տպագրութեան ձեռքերն իս կառավարութեան կողմանէ մէկ արտօնագիր ունենալով, եւ նորին փոքրիկ արդեամբը շատացեալ, ամենակարևոր պիտոյս զաւակաց հայթայելով կապրէի: Բայց յաւուրս նախնի վարչութեան երկու եւ երեք եկեղեցական անդամք վարչութեան կեդրոնական սնտուկին զիս իբրև

պարտաւոր ցուցանելով, (որ ճշմարտութեամբ խօսելով նոյն սնտուկին մէկ Բարձր անդամ պարտք չունիմ,) մեր արտօնութիւնը չընջերու՞ փորձ փորձեցին, եւ այն յանուն վարչութեան. յորմէ եհաս ինձ այժմ վիճակ յետին աղքատութեան եւ թշուառութեան եւ կարօտութեան օրական աշտուճ հացի, ուստի ստիպուեցայ այսօր այս աղերսախառն գրութեամբս դիմել Ազգային Ընդհանուր Պատկառելի Ժողովոյ, եւ խնդրել զոնէ երկամեայ ժամանակ եւ չնորհել ինձ ապահովութիւն արտօնութեանս ի սէր Աստուծոյ եւ ի մխիթարութիւն բազմաշխատ ծերունւոյս:

Քաջայոյս եմ, որ արդարախոհ Պատկառելի Ազգ. Ժողով, յիշելով վախճանն եւ երկու ամեայ հաւատարիմ ծառայութիւն, եւ ազգային զանազան գործոց մէջ աշխատութիւն իմ, եւ գթալով ուխտուն եւ երկուսամեայ ծերութեան եւ տկարութեան իմոյ բարեհաճի զիջանիլ ի խընդիր իմ կարելի. որով պարտաւորէ զիս ցկեանս բարեմաղթութիւն ազգիս լրութեան, եւ ազգօգուտ կենաց ձերոց, ողջ լերուք:

1879 Յուլիս 28 Աղօթարար Երեմիա բանաւանյ Ս. Ստեփաննոս Եկեղ. Խաղաղ

Սոյն նամակիս ներքեւ գտնուած ըստորագրութիւնն Արժ. Տ. Երեմիա Հօր ձեռագիր ստորագրութիւնն լինելն թաղ. խորհուրդս կը վաւերացնէ:

29 Յուլիս 79 (Կնիք թաղ. խորհուրդոյ) Խաղաղ

(Յետ ընթերցման)

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս Օրացոյցի մե-

նաչնորհի խնդիրն իւր յարակից պարտուց խնդրովն հանդերձ եթէ չեմ սխալիր, քանի մ'անդամ եկած է արդէն ժողովիս, եւ նախաքննութենէ անցնելով անդեկագրուած է թէ պէտք է վարչութեան յանձնել զարժանն սնորհներու համար: Ուստի եթէ կը հաճիք, այս աղերսագիրը կը յղենք վարչութեան, որ պէս զի նկատողութեան առնու ծերունի Քահանային խնդիրն եւ պարտուպատշաճը սնորհներու հաճի:

Տ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԷՅ. — Սակայն պայման կառաջարկեմ որ վարչութիւնն իւր սնորհներու խնդրոյն հաղորդել հաճի ժողովիս:

(Հաւանութեան ցոյցեր)

Ժողովը կը հաւանի եւ հետեւապէս Ատենապետ փաշան Տ. Երեմիա քահանայի աղերսագիրը կը ՅՂԷ Ազգ. վարչութեան զարժանն սնորհներու համար եւ իւր սնորհներու խնդրը Ազգ. Ժողովոյ հաղորդելու պայմանաւ:

5.

Ժողովրդային աղերսագիր մը.

ԱՏՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովրդեան կողմէ բազմաթիւ ստորագրութեամբ աղերսագիր մը եկած է ուղղեալ առ Ազգ. Ժողովն, որու ստորագրութիւններն ինչպէս կը պահանջէ կանոնը, վաւերացեալ են, Ղալաթիոյ Թաղ. խորհուրդոյ կողմէ, եւ Աղերսագիրն արձանագրեալ ի Կիւանատան Պատրիարքարանի, թիւ 11: Ահաւասիկ կը ներկայացնեմ ձեզ սոյն Աղերսագիրն:

Վսեմափայլ Ատենապետ փաշա Ազգային Ընդհանուր Ժողովոյ,

Երբեմն բացառիկ պարագայներու մէջ օրինական եղծումներ իրենց բարեբեր արդիւնքովը կարգարանան, բայց ա-

ւելի կարելիք կըլլայ այն եղծման խոցը ազգին համար, երբ չափազանց ցաւալի արդիւնքներ կարտագրէ:

Ահա այս կարգէն եղած է ասկէ առջի Պատրիարքական փոխանորդութեան խնդիրը որ փոխանակ բարութեանց աւելի աղէտաբեր հետեւանքներ ունեցաւ: Օրինաւոր Պատրիարք չկայ, կառավարութեան հետ յարաբերութիւն չկայ, մէկ կողմէն Ազգին կենսական ու հանրական խնդիրներ կը բարդուին, միւս կողմանէ Ազգային իշխանութիւն մը որ ազգեցութիւն չունի կառավարութեան քով, ամեն պարագայի մէջ անարդանք անպատուութիւն եւ յանիրաւի կասկածանք ազգիս նկատմամբ, եւ որ աւելի ցաւալին է՝ չեմք գիտեր ժողովուրդը զբաղեցնելու մտօք է ինչ է, թաղ չմնաց ուր տեղ օր ըստ օրէ խռովութիւն չծագի, դաւառ չմնար յորում հետզհետէ դժտութիւն չծնի, մանաւանդ Տիգրանակերտի ազգալիսս խնդիրը, Երեսփոխան Տեարք իմ. . . : Այս տեսակ պարագաներու մէջ ահա ժողովրդեան բարի եւ արդարացի զայրոյթը իրաւամբ կը զարթնու եւ կը պարտաւորի համակամ տեղի դտած եղծմանց առաջըն առնելու համար մինչև պէտք եղած աստիճանը միջամտել:

Ուստի երեսփոխան Տեարք կամայն է որ ներկայ անհանդուրժելի տարտամ է ազգաւէր վիճակնուս վերջ մը տալով Ազգային իշխանութիւնը իր օրինաւոր շաղկին մէջ կը դնէք եւ կամ թէ ոչ բոլորովին կը թողուք այդ աթոռներ ի յուսահատութիւն Ազգիս, ասելով թէ ոչինչ կարեմք դարձան տանել եւ իմիք: Այս առաջին խնդիրնիս էր, դանք երկրորդին: Երեսփոխան Տեարք, ներեցէք մեզ ըսել թէ Ձեր Պատկառելի շարքին մէջ երկու

Ահաւասիկ կը ներկայացնեմ ձեզ սոյն Աղերսագիրն:

երեսփոխաններ կան, որոնք ազդիս գրեթե ամբողջութեանը քով համարումնին կորուսած են այսքան տարիէ ի վեր իրենց բռնած եպերերէի և կասկածելի ընթացքով, այս անձերն են փախաղեան Սահփան և Ղազարուեան Քրիստոստուր էֆէնտիք, հետեւարար և այս երկու երեսփոխանաց անմիջապէս դադարումը և ազդային ամեն տեսակ դործերէ քաշուելնին կը խնդրուի ի հանդարտութիւն և ի խաղաղութիւն Ազդիս:

Վստահ եմք որ Պատկաւելի Ատեանը մեր սոյն կրկնակի արդարացի խընդիրները ինկատի առնելով պէտք եղածը կը անօրինէ, նոյնպէս և Ազդային ժողովդալ կրնայ վստահ ըլլալ որ ժողովուրդը միշտ իր օրինաւոր իշխանութիւնները կը յարգէ ինչպէս մինչև ցարդ:

Մենայն ամենախոնարհ ծառայք
(Առաջադիւծ — սարգիստիս)

2 Օգոստոս 1879
Ղալաթիա

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ազերսագրին պարունակութեանը տեղեկացաք, և այժմ կը մնայ զայն ևս յղել ըստ կանոնի Յարարեութեան գիւանին ի նախաքննութիւն:

ՍԷՐՎԻՉԷՆ ԷՅ. — Ըստիս այս ազերսագիրը կարեւորութիւն ունի և խնդիրը ծանրակիս է և ստիպողական, ուստի ստիպողութիւն և անմիջական վիճարանութիւն կառաջարկեմ, և եթէ ժողովն ընդունի՝ այն ատեն պիտի ըսեմ ինչ որ կը խորհիմ խնդրոյն վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնէք որ Սէրվիչէն էֆէնտիս ստիպողութիւն կրնայեալ ազերսագրոյս յարուցած խնդրոյն և անմիջա-

կան վիճարանութիւն կառաջարկէ, ուստի այս ծառայն ժողովն կարծիքն պիտի խնդրեմ:

Հետեւապէս Ատենապետ փաշան քուէի կը դնէ խնդիրն և ժողովը միաձայն խնդրոյն ստիպողութիւնն ընդունելով՝ ԿՈՐՈՇԷ անմիջական վիճարանութեան ենթարկել զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն խօսքը Սէրվիչէն էֆէնտիսն է:

ՍԷՐՎԻՉԷՆ ԷՅ. — Եթէ խնդիրն ստիպողական համարեցի, պատճառն այն էր որ ազերսագրոյն մէջ կէտ մը նշմարեցի օրինաւորութեան վերաբերեալ, որ կարծէր անմիջական կերպով ժողովին ուշադրութիւնը գրաւելու: Գանդաս կար թէ ազդային դործոց ընթացքն օրինաւորութեան չաղէն խօտորեր և ամեն ինչ անկայուն և տարամ վիճակ մ'առեր է, և արդէն ամբողջ ազերսագրին նիւթը՝ սկիզբէն ցփերջ՝ եթէ ուշադրութեամբ քննես և ամփոփես, կը տեսնես որ ոչ այլ ինչ է, բայց միայն օրինաւորութեան խնդիր: Ես կը կարծեմ որ այս ամենը միայն մէկ բանով կրնայ վերջանալ, այսինքն երբ Արքայան Պատրիարքը բարեհաճի ելնել իւր աթոռը բազմի և իւր հրաժարականի խնդրոյն վերջ տալով իւր պաշտօնը ձեռք առնուլ, Արք՝ եթէ գուք ևս ինձ համամիտ կը դանուիք, միահամուռ առաջարկենք նորին Արքայանութեան որ յանձն առնու իւր աթոռը ելնել:

(Հաւանութեան և անդուն ցոյցեր ամէնուստ)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնեմ որ այս առաջարկութիւնն արձագանք կը դանեմ ամէնուստ, ուստի կը փութամ քուէի դնել զայն և կը հրաւիրեմ որ այդ առաջարկն ընդունողներքն հաճին յստակայս յայտնել իրենց հաւանութիւնն:

Եւ Ատենապետ փաշայի այս հրաւիրանաց վրայ համայն երեսփոխանք ոտք կելնեն միահամուռ, և այսպէս ժողովն ընդհանուր հաւանութեամբ ԿՈՐՈՇԷ ըստ առաջարկութեան

Սէրվիչէն էֆէնտիս առաջարկել նորին Արքայանութեան որ հաճի իւր աթոռը բազմի, և ի ձեռն առնու իւր Պատրիարքական պաշտօնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (ուղղելով խօսքն առ Ս. Պատրիարքին) Ազդային ժողովը, Արքայան Հայր, ահա տարի հանդիսաւոր քուէով մը կառաջարկէ խնդրել Ձեր Արքայանութեան որ շնորհ ընէք Ձեր աթոռը բազմի և վարել Պատրիարքական պաշտօնն: Այս է կամքն հաւորէն ազդին և Ձեր Արքայանութեան հայրենասիրութիւնն, որու այնքան ապացոյցներ ընծայած էք, տարակոյսի տեղի չթողուր մեզ, որ պիտի տեղի տաք ազդին կամոցն, և Պատրիարքական աթոռն ընդունիք, որ կը բազմայ զձեզ տեսնել Ազդը:

ՆԱԽԱԳԱՀ ՍԲՐԱԶԱՆ. — (Երեսփոխանական աթոռի վրայ բազմած) Գիտէք որ հրաժարելու երկու պատճառ ունէի, մին էր անձնական տկարութիւնս, և միւր՝ Հայաստանի ժողովրդեան ամենօրեայ տառապանաց վախճան մը չգտնելը: Այս երկու պատճառներն կը շարունակեն գեա, ինչպէս կարելի է ուրեմն ինձ որ առանց հակասութեան մէջ իյնալու ելնեմ Պատրիարքի աթոռը բազմիմ, մանաւանդ որ ժողովոյս բացման առաջին նիստին մէջ յիշատակուած է արդէն, որ մինչև Պատրիարքի հրաժարման պատճառները չը բարձուին, Պատրիարքը չպիտի կարենայ վերադառնալ իւր պաշտօնին գլուխը: Ժողովը արդէն հաճութիւն տուած է այս խօսքին, և միթէ արդի որոշումով հակասութեան մէջ չէք լինար և գուք Առաջարկութեան հեղինակն Սէրվիչէն էֆէնտիս իրբեւ հայր իմաստուն՝ օրինելի է մեզ, իւր խօսքերը մեծ յարգ և կշիռ ունին, բայց ինք բժիշկ է, ինչպէս և գուք, Ատենապետ փաշա, կը խնդրեմ որ հաճիք ըսել թէ իրօք հիւանդ եմ թէ կը կեղծեմ, և թէ այս վիճակով կրնամ Պատրիարքութեան տաժանելի պաշտօնը վարել:

Այս կէտին համար Ձեր վկայութիւնը կը խնդրեմ, իսկ երկրորդ կէտին նկատմամբ ժողովն կը զիսեմ որ շնորհ յայտնել թէ վերջ գտա՞ւ արդեօք Հայաստանի ժողովրդը:

Կան թշուառութիւնը, որ վերցած լինի հրաժեշտիս այս զօրաւոր մէկ պատճառը, և կարենամ զայն ևս առնուլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արքայան Պատրիարք Հօր առարկութեանց մէջ կէտ մը կայ, որ բարեբաղդարար սխալ է: Նորին Արքայանութեան Ազդ. ժողովոյ նոր տարեշրջանին առաջին նիստին նախադասական բացման ճառին մէջ Պատրիարքական հրաժեշտի խնդրոյն վրայ զուրցուած խօսք մը կը յիշատակէ, և կը կարծէ որ ժողովը զայն ընդունած և այսօր հակասակն որոշելով հակասութեան մէջ կը դանուի: Երաւ է որ այսպիսի ակնարկ մ'եղած է բացման ճառին մէջ, սակայն սխալմանն այն տեղ է որ այս խօսքն իրր ժողովին կարծիքը կամ որոշումը կը նկատուի: Կանոն է որ ժողովը նախադասական բացման ճառին կը պատասխանէ ուղերձով մը, և այս կերպով կը յայտնէ թէ ինչ կը խորհի ինք նախադասին յայտարարութեանց նկատմամբ, թէ մը կէտը կրնայունի և մը շընդունիր: Այս ուղերձն Ատենապետաց գիւանը կը խմբագրէ, և ժողովն ի բացակայութեան նախադասին կը քննէ զայն և կը վճէ: սակայն Ատենապետաց գիւանը այս տարի չկրցաւ գեա կազմուիլ և հետեւարար չկրցաւ նաեւ ցարդ բացման ճառին ի պատասխանի ուղերձ պատրաստել ժողովին կողմէ, որով չկրնար ըսուիլ թէ ժողովը բառ առ բառ ընդունած է բացման ճառին պարունակութիւնը: Բայց ինչ որ ալ ըլլայ անցեալն, եթէ, Արքայան Հայր, կուզէք զիսնայ թէ Ազդ. ժողովն ինչ կը խորհէ Ձեր հրաժարականի խնդրոյն վրայ, գեա ևս քանի մը վայրկեան տառջ յայտնեց նա իւր կամքը, քուէարկելով հանդիսապէս որ կը բազմայ և առանցեամբ տեսնել Ձեր Արքայանութիւնն Պատրիարքական դահուս վրայ. ասոր միայն շնորհեցէք Ձեր ուշադրութիւնը և հաճեցէք Ազդին կամքը կատարել:

ՍԷՐՎԻՉԷՆ ԷՅ. — Արքայան Պատրիարքն իրր պատճառ իւր հրաժեշտին երկու կէտ մէջ բերաւ, մին իւր անձնական տկարութիւնն և միւր ևս գիմեց որ յայտնեմ կարծիքս այս մա-

սին, Արքայազան Պատրիարքին հիւանդութիւնը թէեւ անբուժելի չէ, բայց չկրնար քիչ ժամանակի մէջ ապաքինիլ, այլ բժշկական երկար դարմանի կը կարօտի: Այսու հանդերձ գիտեմ նաեւ որ Նորին Արքայազանութիւնը չէ թէ միայն իրր եկեղեցական եւ Պատրիարք, այլ իրր հայր հասարակաց ինչ զոհոյթութիւն որ պահանջուի իրմէ չզղանար եւ ազգին սիրոյն եւ օգտին համար եթէ հարկ ըլլայ մինչեւ իսկ իւր կեանքը վստահելի մէջ դնել, այդ զոհն ալ մատուցանելու պատրաստ է: Արդ՝ թէեւ Արքայազան Պատրիարքին մէջ բերած այդ պատճառը կարեւորութիւն ունի, բայց ինք անոր վրայ չափոյն էր, եւ ժողովը կրնայ իրեն ըսել որ գիտեմ հիւանդ եւ անձամբ, բայց անձը զօհէ ազգին համար, եւ շնորհ բլէ Պատրիարքական աթոռը բազմիլ, իսկ գալով երկրորդ կէտին յայտնի է որ Պատրիարք Արքայազանը ազգին սաստագանքը տեսած, եւ գարմանը չկարենալով գտնել հրամարտէ: Հրամարտական մ'այս պարագային մէջ երկու բան կենթադրել, կամ յուսահատութիւն, եւ կամ տէրութիւնը գրգելու եւ ազէտից գարմանը ձեռք անցնելու գիտում: Աթէ յուսահատութիւնն է շարժառիթ, թէ եւ եւ այնքան յուսահատելու պատճառ չեմ գտներ, սակայն չենք կրնար համամիտ լինել Արքայազան Պատրիարքին որ միայնակ յուսահատելով հրամարտի, այլ պէտք է ամենքս մէկէն մեր յոյսը կտրած ըլլանք եւ քաջութիւնք այս աթոռներէն, բայց կրնանք համարուիլ որ անպատելեան տեղ՝ աշխատութիւն հարկաւոր է, եւ այն ատեն կարելի է մեր վիճակին բարեօրոյն ձեռք բերել: Իսկ եթէ տէրութիւնը գրգելու համար է հրամարտկանք, քանի մ' ամէն ի վեր ակամատես եղանք թէ ինչ արդիւնք ունեցու այս միջոցը, այնպիսի արդիւնք մ' որ եթէ շարունակէ ազգին ապագան վստահելի ներքեւ պիտի լինայ: Ասկէ ստաջ հրամարտականը պէտք մը կրնար եղած ըլլալ, նոյն ժամանակի պահանջմանց համեմատ, բայց այսօր այդպիսի պէտք մը չենք տեսներ մենք, այլ կը տեսնենք որ ուրիշ ընթացքի մէջ մանկ հարկաւոր է, քան թէ այսպիսի տարտամ վիճակի մէջ յարատեւել: Կանխորժեմ խօսքս, Արքայազան Պատրիարքին իւր հիւանդու-

թեան պատճառն ի սէր ազգին պէտք է մէկգի թողու, իսկ հրամարտան արտաքին պատճառին գալով եթէ առ յուսահատութեան կը հրամարտի, եւ չեմ կարծեր որ իրաւունք ունենամ քաղաքական գիրքը յուսահատելի է ըսելու, այս իրաւունքը Արքայազան Պատրիարքն ալ չունի, այլ շատ շատ Ազգ ժողովոյ մեծամանութիւնը կրնայ զաւղ ըսել: Իսկ եթէ ազէտից գարմանը գտնելու համար էր, այլ եւս անցաւ այդ միջոցէն օգուտ քաղելու ժամանակը, եւ հիմա ուրիշ միջոց եւ ընթացք հարկաւոր է ձեռք առնուլ: Աստի կազմակերպ Արքայազան Հօր որ ի սէր Ազգին մէկ կողմ թողու իւր հրամարտականի խնդիրն եւ անցնի իւր աթոռը:

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ. — Այսօր Ազգ. ժողովոյ մէջ իմ ներկայութիւնս ուրիշ պատճառ ունի, գիւանդ հրամարտ էր զիս ըսելով թէ ներկայ պարագայից նկատմամբ իմ ներկայութիւնս անհրաժեշտ է, եւ եւ հարկաւորեցայ գալու: Մեծ ցաւօք լսեցի որ անցեալ չորեքշաբթի օր անվայել ցոյց մը տեղի ունեցեր է, ոչ նուազ վիշտ զգացի նաեւ որ կասկածողներ գտնուեր են որ եւ եղած ըլլամ այդ ցոյցն ընելու գրգռողը:

ԶԱՅՆԵՐ ԱՄԷՆՈՒՍ. — Ո՛չ, ո՛չ:

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ. — (Շարունակելով) Ներկայ պարագայից մէջ Մատթէոս եւ պիսկոպոսը պարզապէս զոհ կերթայ պաշտօնի մը համար, զոր ինքն ալ յակամայս եւ առ հարկի ընդունեց Ազգ. ժողովոյ որոշմամբ, եւ ինչո՛ւ այսպիսի անարժան ցոյցեր պիտի ըլլան անոր գէմ:

Աս թէեւ հրամարտեմ եւ, բայց նոյն ինքն Աէրփիչէն էֆէնտին՝ որ յուսահատութիւնը կը մեղադրէր, քաջ գիտե՛ եւ կրնայ վկայել որ քանի հետացեր եմ պաշտօնէ, առանց կէս ժամ պարտապ անցնելու եւ առանց յուսահատելու զբաղած եմ գարձեալ Ազգին խնդրաջն: Աս ամենէն աւելի թերեւս ողեւորեալ եմ յոյսով զի մարդուն՝ մանաւանդ քրիստոնէին չվայելը յուսահատել, եւ ձեռնթափ նահանջել աշխատութենէ, ո՛ր կը մնայ եկեղեցականին, կամ հանրական գործոց գլուխը կեցող անձին, որք ծանր պարտականութիւններ ստանձնած են, յիշէ մենք յարատեւելու սիրտով շարտաւել, միշտ ազգին օգուտը մեզի կէտ նպատակի գնելով, եթէ անձնական ամենի կիրքէ եւ նկատումէ վեր գտնենք ընդհանուրին շահը, հաւաստի եզրիք որ մերն է ապագան, որ ծիծաղելով կերելի մեզ հորիզոնին վրայէն, Բայց երբ մենք մեր մէջ երկդառակ եւ անմիտան՝ փոքուն եւ սին խնդիրներու համար՝ առաջնորդի, քարոզիչի վարդապետի կարիւններով ընդ երկար զժամեր մաքառինք, մեր եկեղեցւոյ սրբաւայրը, մեր Այարջութեան Խորհրդարանը պատերազմի դաշտ գարձենք, ընդունայն պիտի սղառենք մեր ոյժը մեր մէջ, եւ ինչ պիտի խորհին արգեօք օտարները մեր վրայ: Մենք որ այս երկրին մէկ պատուական ժողովուրդը, մէկ կարեւոր տարրն ենք, պիտի արհամարհուինք, պիտի լքուինք, եւ պիտի ըսեն մեզ համար թէ անպիտան ժողովուրդ մ'է այս եւ ո՞ գիտե՛ թերեւս զայս ըսել տալու համար այսպիսի ցոյցեր եւ գործեր ընել կուտան անձը՝ որ մեր բարիքը մախանօք կը զիտեն, ուստի պէտք է զգուշանանք, եւ մեր շահերուն վրայ արթնութեամբ հակենք, իսկ գալով իմ անձնականիս երկու երեսելի բժիշկ կը հաստատեն թէ հիւանդ եմ գարմանի կարօտ: արդ եթէ կը պահանջէք որ անձս զոհեմ, առանց գարման տանելու՝ եւ պատրաստ եմ ազգին կամքը կատարելու:

կրնար ընել որու վրայ տարակուսող երեւութեան մը չկայ մեր մէջ: Իսկ այժմ այս խնդրին զինուորական կերպարանքներ առնելէ ետեւ՝ այնպիսի վիճակի մը հասած է որ այլ եւս անհնար է որ Արքայազան Պատրիարք հայրը չբաղմի իւր աթոռին վրայ: Նորին Արքայազանութիւնը պահ մ' առաջ՝ տեղի ունեցած յուզմանց համար իւր ցաւը յայտնեց, եւ ըսաւ թէ Գիւանին հրամարտօք եկած էր այդ պատճառին համար: Բայց այս յուզումները պիտի ծաւալին, եւ սաստկանան, ցորչափ Արքայազան Պատրիարքը հետի կգտնուի իւր աթոռէն եւ ամէնքըս ալ գիտենք որ այս յուզմանց հետեւանքն որքան գաւն եւ վեասարեր պիտի լինի ազգին համար: Իսկ երբ Ձեր Արքայազանութիւնն ազգասիրաբար յանձն առնու Պատրիարքական պաշտօնը, ամեն յուզմանք վերջ կը գտնեն, ինչ անօրինութիւն որ հարկաւոր է կրնաք ի գործ դնել, եւ Ձեր Արքայազանութեան այդ անձնութեան առջեւ՝ մենք եւս կը խոստանամք ձեզ աջակից գտնուիլ, ամեն պարագայի մէջ: Արդ՝ երեւոյթական Տեառք, կասաջարկեմ որ ամենքս միահամուռ եւ յոյսակայս խնդրենք Նորին Արքայազանութիւնն որ իւր աթոռը բազմելու շնորհ ընէ:

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Օտեան էֆէնտինն է:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Կարծեմ Արքայազան Պատրիարքը հաճութիւն յայտնեց անձնութեան թեմամբ բազմելու իւր աթոռը, եթէ սոյսզեւ, հարկ չկայ այլ եւս խօսիլ այս նիւթին վրայ, եթէ ոչ՝ կը խօսիմ:

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արքայազան Պատրիարքին իւր պատասխանը առաւ եւ յայտարարեց արդէն թէ ինք հիւանդ է թէպէտ, բայց եթէ ժողովը խնդիր ընէ Նորին Արքայազանութեան որ իւր անձը զոհելով Պատրիարքական աթոռը բազմի պատրաստ է գարձեալ ժողովոյ վախաքը գոհացնելու:

Նորին Արքայազանութեան հրամարտական իրաց վիճակէն հետեւած էր, եւ անոր յարակից այնպիսի պարագաներ կային, որ ժողովը զայն չընդունէր զատ՝ ուրիշ ոչինչ խնդրենք:

Նորին Արքայազանութեան հրամարտական իրաց վիճակէն հետեւած էր, եւ անոր յարակից այնպիսի պարագաներ կային, որ ժողովը զայն չընդունէր զատ՝ ուրիշ ոչինչ խնդրենք:

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ . — Հարկ չկայ ստիպելու, ես արդէն յայտարարեցի որ եթէ իմ անձս զոհել կը խնդրուի, առանց դարման տանելու ես պատրաստ եմ ամենայնի :

Եւ դայս ըսելով Սրբազան Պատրիարքն անմիջապէս ելաւ բազմեցաւ իւր աթոռը :

Երեսփոխանք միահամուռ եւ յոռնկայս շնորհակալութիւն կը յայտնեն Նորին Սրբազանութեան եւ ունկնդիր բազմութիւ ժողովրդեան կողմէ բուռն եւ երկարատեւ ծափահարութեամբ եւ կեցցէ Ներսէս Սրբազան աղաղակներով զոհունակութեան եռանդուն ցոյցեմ կը լլան :

ԲՈԼՈՒԵԱՆ Ա. ԷՑ. — Շնորհակալ ենք յոյժ որ Սրբազան Պատրիարքը հաճեցաւ Ազգ. ժողովոյ բաղձանքը կատարել, եւ իւր աթոռը բազմելով լուծեց այս ծանր խնդիրը : Իւր հրաժարման երկրորդ եւ գլխաւոր պատճառը Հայաստանի ժողովրդեան տառապանքը եղած էր, սակայն իւր հրաժեշտէն ետեւ՝ ոչ ոք կըրցաւ անոնց վիճակին բարեօրումը ձեռք բերելու ոչ ոք կըրցաւ իւր հրաժեշտի այս պատճառը բառնալ : Նորին Սրբազանութեան վերապահեալ էր դարձեալ իւր ձեռք ջնջել հրաժեշտի այդ ախուր պատճառը, եւ Հայ ժողովրդեան թըշուուռութեան դարման հայթայթել, վասն զի ինք սկսած էր այս գործը եւ ինք էր ամենէն ձեռնհաս եւ ճարտար իւր սկսած գործը սըսակելու համար :

Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՅ . — Երեսփոխան տեա'րք, ի՞նչ յուզմամբ, ի՞նչ յուսոյ եւ անյուսութեան զգացումներով հոս եկեր էինք, եւ ի՞նչպէս Սրբազան Պատրիարք հօր մէկ խօսքը բաւական եղաւ մեզ ցոյց տալու թէ այս ամէն յուզմունք իւր վրայ կը յանդին, եւ ինք միայն կարող էր վերջ տալ մեր սըրտայուզութեանց եւ ստակել մեր յոյսերը : Շնորհակալ ենք որ յանձն առաւ իւր աթոռը բազմել, եւ յօժարիլ ի գլուխ հանելու գործն, զոր սկսած էր : Թէ ի՞նչ են մեր յոյսերը, եւ ի՞նչ մեր յուսահատութեան պատճառները, բացատրել աւելորդ է, զի ամէնքս ալ քաջ գի-

տենք : Եթէ այս ճգնաժամուն մէջ՝ որ Արեւելից վրայ կը ծանրանայ, չգնահատենք մեր վայրկեաններուն արժէքը, չըմբռնենք իրաց վճակը, տարակոյս չկայ թէ ապագային մէջ նըշանակութիւն չպիտի ունենանք : Եթէ Հայն արժանապէս ցոյց չտայ իւր յարգը մանաւանդ Եւրոպական տէրութեանց առջեւ, արժանի չպիտի կրնայ լինիլ այն քաղցր ապագային, որու աւետիսը տուաւ Սրբազան Պատրիարքը : Բայց անաւասիկ Նորին Սրբազանութիւնն իւր դահու վրայ է այժմ, նա պիտի առաջնորդէ մեզ այն ճամբուն մէջ, զոր ինք բացաւ, իւր հայրենասիրութենէն օրինակ պիտի առնունք, պիտի աջակցինք իրեն, եւ ինք՝ ղէկավար փորձառու եւ ճարտար՝ պիտի հասցնէ նաւն ազգին ի նաւահանգիստն անքոյթ : Եթէ աշխարհական եւ եկեղեցական այս յոյսերով մեր աչքերը կը բեւեռենք Սրբազան Պատրիարք Հօր վրայ, տեսանք վասն զի հնդամեայ փորձով իւր արդիւնքները, տեսանք որ մինչեւ իսկ իւր կենաց վտանգն առ ոչինչ գրելով տընեցաւ որ ազգին ապագան պատրաստէ : Սրբազան հայր, դու որ պատերազմեցար այնքան զժուարութեանց հետ, այնքան ծանրակշիռ պարագաներու մէջ քաջացար, արխացար, ո՛ր անձնուէրդ հայրենեաց, եւ Ներսէսներու կարգին անցար, հիմա ալ երբ հիւսնողութեանդ հետ կը մտքաւիս, չես վտարմիր դարձեալ այդ տկար անձդ ազգին զոհելու, երբ դայդ կը խնդրեն : Երջանիկ է Երեսփոխանական ժողովն որ իրեն գլուխ կունենայ զԶեզ, նա արժանապէս կըրցած է գնահատել ձեր յարգը եւ կը խոստանայ ձեզ ոչ որ մ'իւր պատմական արձանագրութեանց մէջ ոսկի տառերով պիտի գրօշմէ Ձեր անունն, ինչպէս որ խորաթափանց քանդակուած է մեր ամենուս սրտին մէջ : Կը խնդրենք ուրեմն, Սրբազան Հայր, դուք մեզ առաջնորդեցէք, երբ դուք գլուխ լինիք մեզ՝ պիտի լուեն ամէն անձնական վէճեր, առաջնորդի, քարոզչի եւ վարդապետի խնդիրներ, եւ ամէն ոք պիտի աջակցի Ձեզ, Սրբազան հայր, որ ստաջնորդէք ազգը գէպի այն ապագան, որու կսպասենք լի յուսով, լի սրտով : Այո՛, շատ աղէկ ըսիք, Հայր յուսաբեկ չէ, իւր անունն, իւր ապագան երաշ-

խաւորեցէք, եւ պիտի հասնի այն օրն, յորում առաւել բերկրութեամբ պիտի ողջագուրենք զԶեզ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Սրդէն ամբողջ երեսփոխանութիւնն իւր շնորհակալութիւնը մատուց Սրբազան Պատրիարք Հօր, որ հաճեցաւ Պատրիարքական պաշտօնին գլուխն անցնիլ : Իսկ ես պարտաւորութիւն ունիմ մասնաւորապէս շնորհակալիքս յայտնելու անոր համար, որ Նորին Սրբազանութիւնը բազմելով իւր աթոռը, ազատեց նաեւ զիս զերութեան եւ սարկութեան քառամսեայ պաշտօնէս, զոր ի սկզբան մերժելէ ետեւ՝ առ հարկի ընդունած էի Ազգ. ժողովոյ եւ Վարչութեան թախանձանօքը :

(Ատենախօս Սրբազանը Պատրիարք Հօր աջը համբուրելով կը նստի իւր աթոռը :

ՕՏԵԱՆ Գ. ԷՑ. — Սրբազան Պատրիարք Հօր հրաժարականն ինչ պատճառներու համար ալ եղած ըլլայ, զո՞ մը յառաջ բերած է, եւ այն զոհը Տ. Մատթէոս Եպիսկոպոսն եղած է : Գոհ եմ որ ինք բացաւ այս խնդիրն որ ես ալ կարենամ այս վկայութիւնն ընել իրեն համար : Շատ տարիներ առաջ ճանչցայ զինքը դարձեալ այս ժողովին մէջ, այն ատեն աւելի եռանդ ունէր, իսկ երբ անկէ ետեւ կրկին հանդիպեցայ իրեն ազգային գործոց մէջ, տեսայ որ իւր եռանդեան հետ լծորդած էր նաեւ փորձառութիւնն լի հայրենասիրութեամբ : Բայց զժաղդարար իւր այս պաշտօնավարութեան մէջ չորս ամիս շարունակ ոտնակապելու մնաց, որովհետեւ Բ. Գուռը չէր ճանչցած զինքը, եւ ինք՝ ժողովրդեան վիշտերը լսելու գատապարտեալ՝ չէր կրնար ոչ Բ. Գրան քաղրիք գրել, ոչ անոնց ցաւոց դարման մատուցանել, եւ այսպէս կատարեալ զոհի մը վիճակին մէջ գրուած էր : Արդ երախտապարտ մնալով Սրբազան Պատրիարք Հօր, որ անձնութեամբ հաճեցաւ բազմիլ իւր աթոռը, կարծեմ մեր պարտքն է նաեւ՝ Տ. Մատթէոս Եպիսկոպոսին շնորհակալութեան քուէ մը տալ :

ԲԱԶՄԱԹԻ ԵՍՏԱՐԱՆՆԵՐԷ ԶԱՅՆԵՐ . — Այո՛, այո՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ժողովրդեան ազերասագրոյն առթիւ Պատրիարքական հրաժարականի խնդրոյն վրայ խօսող երեսփոխանաց շարքն այժմ ստաւեցաւ . ժամ է արդ կանոնաւորապէս վերջ տալ խնդրոյն՝ քուէարկութեան գլխելով : Բայց ըստ որում մեր սիրելի եւ անձնուէր Պատրիարքը կանխեց իւր անձն հայրենեաց զոհ տալով՝ երկը բազմիլ իւր աթոռը, այլ եւս հարկ եւ տեղի չկայ այս մասին կրկին քուէ առաջարկելու . ուստի եթէ կը հաճիք Օտեան էֆէնտի առաջարկութիւնը ընդգրկելով քուէ տամք երախտապարտ շնորհակալութեան նախ՝ Սրբազան Պատրիարքին ցոյց տուած անձնութեան զոհողութեան համար եւ երկրորդ՝ Իզմիրլեան Տ. Մատթէոս Եպիսկոպոսին լի զոհողութեամբ մատուցած ծառայութեանը համար :

Հետեւապէս Ատենապետ վաչան՝ Օտեան էֆէնտի առաջարկն երկու մասի բաժնելով՝ քուէի կը դնէ զատ զատ, եւ ժողովը միաձայն՝ նախ Ամեն. Սրբազան Պատրիարք հօր ցոյց տուած վսեմ անձնութեան եւ յետոյ Իզմիրլեան Տ. Մատթէոս Եպիսկոպոսի անձնուէր ծառայութեանցն համար երախտապարտ շնորհակալութիւն կը յայտնէ միահամուռ՝ ձեռնածիք հաւանութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Կը յիշէք որ ժողովը Պատրիարքական փոխանորդի պաշտօնը սահմանած ատեն որոշած էր որ այդ պաշտօնը պիտի վերջանար այն օրը, յորում Սրբազան Պատրիարքն իւր աթոռը դար կրկին բազմէր : Արդ՝ խնդիրը կատարելապէս վերջացնելու համար՝ կը յայտարարեմ որ այս վայրկեանէս վերջացած է այլ եւս Տ. Մատթէոս Եպիսկոպոսի փոխանորդութեան պաշտօնը : Կը մընայ այժմ ժողովրդային աղերսագրոյն երկրորդ կէտը : Այդ աղերսագիրը կը պահանջէ որ մեր երկու ընկերներն, Ղազարոսեան Գրիստոստուր եւ Փափագեան Ստեփան էֆէնտիներ, երեսփոխանութեանէ դադրին եւ ազգային ա-

մեն գործերէ հեռանան : Այժմ պէտք է որ ժողովն այս կէտն ալ կամ ի նախաքննութիւն յղէ , եւ կամ անմիջապէս վիճաբանութեան ենթարկէ : Ինչպէս կը հաճիք ընել , կը խնդրեմ որ յայտնէք ձեր կարծիքը :

ՁԱՅՆԵՐ . — Կուզենք որ խնդիրն այսօր վերջանայ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ես պարզապէս կառաջարկեմ որ աղերսագրին այս կէտը ջուռով մը մերժուի անմիջապէս : Խնդրոյն օրինական կէտին մէջ չեմ ուզեր մտնել , վասն զի բացայայտ ճշմարտութիւն մ'է որ ոչ ոք իրաւունք ունի , մինչեւ իսկ հազար , երկու հազար , երկու հարիւր հազար հոգի , այս սեղ զալու եւ այսպէս բռնի այս կամ այն երեսփոխանին պաշտօնանկութիւնը եւ ազգային գործերէ հեռացումը պահանջելու : զի ազգն է զայն ընտրողը եւ մարդ չկրնար ազգին ընտրածը չուզել : Այս խնդրոյն օրինական կէտն է : Ասկէ դատ կարելի է որ այս պահանջումը մեր երկու ընկերներն վերադարձու չպատակաւ եւ դաժ ըլլայ . ես սուր դէմ ալ կը բողոքեմ : Ազգային զանազան խնդրոց մէջ շատ անգամ ես ալ անոնց հետ համամիտ չեմ գտնուած , եւ երբեմն ինծի հակառակ ելած են . բայց կը հաւատամ որ միշտ ազգին օգտակար եղած են իրենց ծառայութեամբը : Գաղափարաց եւ կարծիքներու անհամաձայնութիւնը կը հասկընամ , բայց չեմ կրնար ըմբռնել թէ ինչ կը նշանակէ այս անհամաձայնութիւնն՝ այս աստիճան յառաջ մղել , եւ մինչեւ անհաշտ ատելութեան հասցնել , մանաւանդ Ազգին ներկայ վիճակին մէջ , ուր միութիւն եւ զոհողութիւն հարկաւոր է : Մարդիկ կան , եւ կը լսեմ նաեւ թերթեր , զորս ես չեմ կարգացած , որ Սրբազան Պատրիարք Հօր էն աղէկ գործերը , եւ այս ժողովին էն օգտակար անօրինութիւնները շարաշար դատափետել եւ պախարակել , եւ այս ու այն պաշտօնակալը վատահամբաւել իրենց պաշտօն ընտրած են . բայց նոյն իսկ այդ ընտրներն որովհետեւ Հայ են , կը հաւատամ որ ամէն անգամ երբ այդպէս կընեն , շատ չանցնիր կը զըջան իրենց

ըսածին վրայ : Գրածնին Սրբազան Պատրիարքին դէմ է , իսկ խիզճերնին անոր հետ : Մենք այս ատելութիւնը անուցանողներուն պէտք է սիրով պատասխանենք , եւ հաշտ ախտեր նախնիք անոնց : Թէ որ այսպէս ընենք եւ կատարեալ անշահախնդրութեամբ վարուինք , անշահախնդրութիւն ոչ միայն դրամոյ , այլ եւ փառաց , այլ եւ համբաւոյ , այլ եւ ժողովրդականութեան , կը հաւատամ որ կարենանք այն ատեն ճշմարիտ ծառայութիւն մը մատուցանել Ազգին : Արդ՝ կը կրկնեմ դարձեալ , աղերսագրին այն կէտը՝ որ խնդիրն նշանակութիւն չունի օրինաց առջեւ , այլ ատելութիւն կարտայայտէ միայն մեր երկու պատուական ընկերաց դէմ , պէտք է մերժենք մեր միաձայն քուէովը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒՍՏ . Գուէ , քուէ :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Մեր բաղմարդիւն ընկերն , Օտեան էֆէնտի , ինչ որ խօսեցաւ , սկզբան վրայ հիմնեալ էր , ուստի այլ եւս անձնականութիւնը պէտք է լռեն . քուէ :

ԳԱՐՁԵԱԼ ՁԱՅՆԵՐ . — Գուէ , քուէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թող տուէք որ խօսիմ եւ զոհ պիտի ըլլաք իմ ըսելիքէս , զոհ պիտի ըլլան նոյն իսկ հակառակորդներս :

ՁԱՅՆԵՐ . — Ո՛չ , ո՛չ . քուէ , քուէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պիտի խօսիմ , պիտի խօսիմ , թող տուէք , ըսելիքներ ունիմ , խօսք կուզեմ :

Շչուկը . — Ատենապետ փաշան ժողովին եւ Փափագեան էֆէնտի հանդարտութեան եւ լռութեան յորդոր կարգալէ ետեւ : Նախագահ Սրբազանին կը դիմէ Փափագեան էֆէնտին խօսեցնել տալու կամ չտալու մասին իր կարծիքն յայտնելու հրաւիրանօք եւ նորին

Սրբազանութիւնը մեծագոյն մասին համակարծիք ըլլան կը յայտնէ . ուստի Ատենապետ փաշան խօսք չտար Փափագեան էֆէնտի եւ վրդովմունքը վերնալով , լռութիւնը եւ խաղաղութիւնը կը վերահաստատուին ժողովին մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Կը տեսնեմ որ ժողովը տրամադիր չէ այս խնդրոյն վրայ վիճաբանութիւնը շարունակելու եւ քուէարկութեամբ վերջ տալ կը փափաքի : Ուստի քուէի պիտի դնեմ այժմ Օտեան էֆէնտի առաջարկըն , այն է մերժել իբր ապօրինի ժողովրդային աղերսագրոյն երկրորդ կէտը , որով մեր երկու երեսփոխան ընկերաց պաշտօնէ դադարումն եւ ազգային գործերէ հեռացումը կը պահանջուի :

Այսպէս Ատենապետ փաշան քուէի կը դնէ խնդիրն , եւ ժողովը Փափագեան էֆէնտի մէկ քուէին հակառակ՝ միաձայնութեամբ ըստ առաջարկութեան Օտեան էֆէնտի՝ աղերսագրոյն երկրորդ կէտը կը մերժէ իբր ապօրինի եւ կանցնի օրակարգին :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Հրաժարագիր Խորհրդարանական Յանձնախմբին

(Յանձնախմբին կողմէ մատուցեալ հրաժարագիրը կը կարգացուի : 1)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ահաւասիկ Խոր-

(1) Սոյն հրաժարագիրն արդէն նախընթաց է : Նիստի Ատենապետութեան մէջ անցած ըլլալով աւելորդ համարուեցաւ կրկին արձանագրել ատանաօր :

հրաժարական Յանձնախումբն երկրորդ անգամ իւր հրաժարականը կը մատուցանէ , յայտարարելով թէ իւր պաշտաման բացառիկ պահանջմանց առջեւ այլ եւս անկարող կղզայ զինքը՝ զայն շարունակելու : Վիճաբանութիւնը բացուած է այս խնդրոյն վրայ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Կառաջարկեմ որ եթէ կարելի է՝ առանց վիճաբանութեան՝ ընդունուի այս հրաժարականն եւ Յանձնախմբին գործը Սրբազան Պատրիարք Հօր յանձնուի :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Օտեան էֆէնտին իրաւունք ունի այս առաջարկութիւնն ընելու , վասն զի Սրբազան Պատրիարքը հրաժարած էր , երբ այս Յանձնախումբը դրուեցաւ , եւ քանի որ նորին Սրբազանութիւնն իւր աջակողմ վերամարձաւ այժմ , հարկ չկայ այլ եւս այս Յանձնախումբին գոյութեան . ուստի կը ձայնակցիմ Օտեան էֆէնտի առաջարկութեան :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Պահ մ'առաջ կը մտածէի թէ Յանձնախումբին հրաժարականը ժողովին ընդունել տալու համար ինչ կերպով կրնայի բացատրել այս հրաժեշտին հարկը : Արդ՝ Յանձնախմբին կողմէ շնորհակալութիւն կը յայտնեմ Օտեան էֆէնտի որ երկու խօսքով լմնցուց , եւ գեղեցիկ փաստ մ'ընծայեց մեզ այս հրաժարականին ընդունելութեանը համար : Շատ ճշմարիտ է որ Սրբազան Պատրիարքը քանի որ իւր պաշտօնին գլուխը կը գտնուի այժմ , այլ եւս պէտք չկայ սոյն Յանձնախմբին եւ հարկ է հրաժարականն ընդունիլ եւ վերջացնել խնդիրը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Յանձնախումբն իւր հրաժարականը տալէ առաջ ընդ երկար խորհրդակցեցաւ այս մասին , ուստի անոր հրաժեշտն վերջնապէս որոշուած ու լմնցած գործ մ'է , որ վէճի ներքեւ իյնալու պէտք չունի , որովհետեւ՝ ինչպէս անցեալ նիստին կանխեցի արդէն յայտարարելու , Յանձնախումբի անգամք տրամադիր չեն բնաւ իրենց հրաժարականն ետ առնելու , հետեւաբար ժողովն ուրիշ

ընելիք չունի, այլ պարզապէս ընդունի անոր հրատարականն: Իսկ թէ անոր պաշտօնին շարունակութիւնն որով յանձնել անկ է, Սրբազան Պատրիարք Հօր, Վարչութեան, թէ ուրիշի մը, այս ուրոյն խնդիր մ'է կարծեմ, որ բաժնեկրով միւսէն՝ պէտք է առանձինն նկատողութեան առնուի եւ որոշել:

ՍԷՐՎԻՉԻՆ ԷՖ. — Ես կը կարծեմ որ այս խնդիրը չբաժնուիր, վասն զի երբ մէկէ մը պաշտօն մը կ'առնուի, հարկ կըլլայ զայն ուրիշի մը յանձնել, եւ այս կրկին գործողութիւնը յարակից են իրարու եւ անբաժանելի: Ուստի, ինչպէս Օտեան էֆէնտին ըսաւ, պէտք է ընդունիլ Յանձնախումբին հրատարականը, եւ անոր գործը Սրբազան Պատրիարք Հօր յանձնել, որ ինչ կերպով եւ կամ որով ձեռք որ յարմար դատի ինք, շարունակէ զայն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես չեմ պնդեր դիտողութեանս վրայ, եւ զայն ետ կ'առնում:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը լուսարանուած եւ այն աստիճանն հասած է կարծեմ, որ այլ եւս քուէ մը միայն պէտք է զայն վերջացնելու համար: Խորհրդարանական Յանձնախումբը կը հրատարի. եւ բացարձակապէս, եւ ըստ որում Սրբազան Պատրիարք Հայրը շնորհ ըրաւ անցնիլ այսօր իւր պաշտօնին գլուխը, այսպիսի Յանձնախումբի մը գոյութեան այլ եւս հարկ չկայ, կը կարծուի: Ուստի Օտեան էֆէնտի կառաջարկէ Յանձնախումբին հրատարական ընդունելով անոր պաշտօնը յանձնել Սրբազան Պատրիարք Հօր: Այս է միայն խնդրոյն վրայ տիրող կարծիքն, եւ ուրիշ որ եւ է հակառակարկ չեմ տեսներ: Հետեւապէս խնդիրը վերջացնելու համար ժողովին քուէն պիտի խնդրեմ եւ եթէ կը հաճիք սա ձեռով թէ՛ Ազգ. ժողովը Խորհրդարանական Յանձնախումբին գոյութեան այլ եւս պէտք չտեսնելով կը լուծէ զայն եւ անդամոց մատուցած հրատարականն ընդունելով, պաշտօնը կը յանձնէ Սրբազան Պատրիարքին:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Երբ յանձնախումբի մ'անդամները հրատարական կը մատուցանեն, փոխանակ հրատարականն ընդունելու, եւ ապա անոր պաշտօնին նկատմամբ անորէնութեան ձեռնարկելու, հրատարականին ընդունելութիւնը պաշտօնին ջնջմանը ենթարկել ուղղել յանձնախումբին պատիւ չըրեր, եւ Խորհրդարանական Յանձնախումբը չեմ կարծեր որ այսպիսի անորէնութեան մ'արժանանալու առիթ տուած ըլլայ ժողովիդ:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ձեմ կարծեր որ մեր մէջ քաղաքավարական խօսքեր փոխանցելու պէտք ունենանք. ամէնքս ալ շնորհակալ ենք Յանձնախումբի անդամներէն իրենց աշխատութեանցը համար, եւ եթէ առաջարկեցի ես որ անոր հրատարականն ընդունուելով Սրբազան Պատրիարք Հօր յանձնուի գործը, վստահութեան պակասութեան համար չէր երբէք, այլ վասն զի՝ Սրբազան Պատրիարքն առանց ուրիշի հարցնելու ինք միայնակ սկսած է գործը, հարկ է դարձեալ որ ինք շարունակէ, առանց ուրիշի ինչ յանձնելու:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Որչափ ալ ի սկզբան կարծուեցաւ թէ խնդիրը հեշտու պիտի վերջ գտնէր, դժբաղդարար երկարել հարկ եղաւ: Ար յիշէք որ Խորհրդարանական Յանձնախումբն այնպիսի պարագաներու մէջ կ'աղմուած էր, յորում Սրբազան Պատրիարքն իրաւացի պատճառներով հրատարած, եւ Ազգ. ժողովոյ համար զգալի հարկ մ'եղած էր այսպիսի մարմին մը սահմանել. իսկ հիմա որ Նորին Սրբազնութիւնն ազգին կամոց առջեւ յօժարեցաւ իւր անձը գոհել եւ իւր պաշտօնն կրկին ըստանձնել, ինքնին կը վերնայ անշուշտ Յանձնախումբին պէտքն, եւ այլ եւս չմնար պատճառ մ'անոր հրատարական խնդրոյ ներքեւ թողելու, եւ մերժելու: Բայց թէ մի պիտի կատարէ Յանձնախումբին պաշտօնն, այս ալ ի հարկէ հրատարականն հետ յարակից խնդիր մ'է եւ անտարակոյս Ազգ. ժողովը զայն Սրբազան Պատրիարք Հօր յանձնելէ զատ՝ ուրիշ ընելիք մը չկրնար ունենալ: Եթ

այնպէս կը հասկնամ որ գործը Նորին Սրբազնութեան յանձնել ըսելը՝ կը նշանակէ որ կամ ինք կատարէ, եւ կամ կատարել տայ ուրիշներու, ինչպէս որ արժան դատէ:

ՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ասկէ առաջ երբ Սրբազան Պատրիարքը համոզեցինք իւր աթոռը բաշմելու, ամեն աջակցութիւն խոստացանք իրեն, զոր անշուշտ պարտաւոր եմք մատուցանել երբ պահանջէ Նորին Սրբազնութիւնն: Ուրեմն, Ատենապետ փաշա, քուէի դրէք Օտեան էֆէնտի առաջարկութիւնը:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Խնդիրն աւելի պարզելու եւ իւր բնական ընթացքին մէջ դնելու համար պէտք է որ գէթ ժողովը սապէս արտասանէ իւր որոշումն, այսինքն թէ Պատրիարքն՝ ինչպէս եւ որով խորհրդակցութեամբ եւ գործակցութեամբ որ սկսեց խնդիրը, նոյնպէս շարունակէ վարել:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Յայտնի է որ ազգին մէջ որքան անհատ կայ՝ եկեղեցական թէ աշխարհական, որոց որ գի՛ւէք, Սրբազան Հայր, պատրաստ են կարծեմ ծառայելու եւ աջակցելու: Միայն թէ ազգին վստահութիւնը Ձեր վրայ է, ուստի պէտք է դուք ստանձնէք գործը եւ սրբան առեն որ այս վստահութիւնը տեւէ՝ շարունակէք վարել զայն, որով հետ որ ուղէք:

Տ. ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊ ՆԱՐ-ՊԷՅ. — Քանի որ լիուլի վստահութիւն ունիք Ս. Պատրիարք Հօր վրայ, մեզ ուրիշ բան չմնար ընել, եթէ ոչ արտօնութիւն տալ իրեն՝ որ պատշաճ դատած եղանակաւ շարունակէ Հայկական խնդիրն, որով ինքն եղաւ հեղինակ: Արդէն՝ Եւրոպայի պատու իրակութեան վերադարձիս՝ առաջին խօսքս այս եղած էր, եւ առիթն եկան որ նորէն կրկնեմ զայն: Այո՛, մեր վստահութիւնը մեծ է Սրբազան Պատրիարք հօր հայրենատիրութեանը վրայ, եւ զիտէ ինք թէ ինչ պէտք է ընել, ուստի կը կրկնեմ այն առաջարկութիւնը, զոր ըրին մեր երկու պաշտօնակիցք, Օտեան եւ Սերփիշէն էֆէնտիք:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում առաջարկած քուէի ձեւս տարածայն մեկնութեանց տեղի տուաւ, եթէ կը հաճիք խնդրոյն երկու կէտերուն շարադասութիւնը փոխենք եւ այնպէս քուէարկենք, որպէս զի ամեն կողման իրաւունքն ապահովուած ըլլան: Այս կէտերուն առաջինն ընենք Խորհրդարանական Յանձնախումբին հրատարականն. եւ որոշենք նախ թէ ընդունելի՞ է թէ ո՛չ, եւ այս առիթով մեր շնորհակալիքն յաւելուեք յայտնել անոր անդամոց մատուցած ծառայութեանց:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

Հետեւապէս Ատենապետ փաշան խնդրոյն առաջին կէտն այս բանաձեւով քուէի կը դնէ եւ ժողովը միաձայն ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, Խորհրդարանական Յանձնախումբին հրատարականը, շնորհակալութիւն կը ՅԱՅՏՆԷ անոր մատուցած ծառայութեանց համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կուգամ հիմա երկրորդ կէտին, այսինքն թէ Խորհրդարանական Յանձնախումբ անունով սահմանուած մարմինոյն գոյութեանն այլ եւս պէտք կը տեսնուի՞ թէ ո՛չ, եւ թէ հարկ է Ամենապատիւ Սրբազան Պատրիարք հօր յանձնել Հայկական խնդրոյ հոգատարութիւնն, որպէս զի իւր արժան դատած եղանակաւ շարունակէ զայն անորինել ըստ առաջնոյն, վստահութիւն յայտնելով Նորին Սրբազնութեան հայրենատիրութեանը վրայ:

Հետեւապէս Ատենապետ փաշան այս բանաձեւով խնդրոյն երկրորդ կէտը քուէի կը դնէ եւ ժողովը միաձայն Խորհրդարանական Յանձնախումբը ջնջելով ԿՈՐՈՇԷ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք հօր յանձնել Հայկական խնդրոյն հոգատարութիւնն եւ անորէնութիւնն, եւ իւր վստահութիւնը կը

ՅԱՅՏՆԷՆԷ Նորին Արքայազնութեան հայրենասիրութեան վրայ :

(Այս պահուս ժողովը քառորդ ժամուշափ դադար կանու, եւ այնուհետեւ կսկսի շարունակուիլ վերստին)

Բ.

Խնդիր Ազգ. Ազգային Տրոց . — Վիճաբանութիւն ի վերայ Համարակալութեան դիւանի տեղեկագրին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ժողովը իւր նախորդ նիստին մէջ ուղղակի տրոց կանոնաց ծրագրին ամբողջութիւնը քուէարկած է արդէն, ուստի վիճաբանութիւնը կը բանամ այժմ յօդուածոց վրայ, յայտարարելով միանգամայն որ սոյն կանոնադրութեան ստիպողութիւն տրուած ըլլալով, միանգամ եւ եթէ ընթերցմամբ եւ միակ քուէարկութեամբ պիտի որոշուի եւ իբր օրէնք սահմանուի Ազգին մէջ . ըստ այնմ կաղաչեմ Ձեզ, կուի Ձեր գիտողութիւնները :

Յօդ. 1. Ազգային ուղղակի տուրքն երկու տեսակ է, կեդրոնական եւ Թաղական :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Այս յօդուածը Սահմանադրութեան մէկ տրամադրութիւնն է, եւ մասնաւոր վիճաբանութիւն չվերցնելու, եթէ ըսելիք չունիք, կանցնինք յաջորդին :

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Քանի որ այս յօդուածը Սահմանադրութեան մէկ տրամադրութիւնը կը պարունակէ, բանաւոր չէ. միթէ զայն բառնալ կանոնաց ծրագրէն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարար Համարակալութեան ղիւանի) ձիշդ այդ պատճառին համար՝ նոյն յօդուածը ղետեղուած է այս ծրագրին ճակատն, իբր մի սահմանադրական հիմն ազգային տրոց, որոյ վերայ կը բարձրանայ մեր քուէարկելի տրոց կանոնագրին շէնքը : Այս կանոնագրին մէջ կան տակաւին ուրիշ յօդուածներ, որ Սահմանադրութենէն առնուած են, բայց չէ կարելի անոնց եւ ոչ մին վտարել ի բաց, զի ամէնքն ի միասին սահմանադրական եւ կանոնական յօդուածք՝ իբր իրարու ամբողջացուցիչ մասունք՝ պէտք է ամփոփ ներկայանան, եւ կազմեն ուղղակի տրոց օրէնքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Լսեցիք թէ ինչ պատճառի համար այդ յօդուածը կանոնագրին մէջ անցնել արժան դատուեր է, եթէ ուրիշ գիտողութիւն չունիք, քուէարկենք եւ անցնինք երկրորդ յօդուածին :

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ես չեմ պնդեր գիտողութեանս վրայ եւ կը համաձայնիմ Համարակալութեան ղիւանին :

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ փաշան քուէի կը դնէ կանոնագրին Ա. յօդուածն եւ ժողովը միաձայն կ'ընդունի զայն :

Յօդ. 2. Իւրաքանչիւր ազգային անհատ որ չափահաս է եւ վաստակի տէր պարտի այս երկու տուրքը միացեալ վճարել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Այս յօդուածն ալ Սահմանադրութեան մէկ յօդուածին կրկնութիւնն է, միայն երկու տուրքն ի միասին վճարուելու պայմանն աւելցած է, անոր վրայ կը հրաւիրեմ ամփոփել ձեր գիտողութիւնները :

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ես կը մտածեմ

որ այս յօդուածը կրնայ պատշաճապէս միանալ յաջորդ յօդուածին հետ, որոյ երկուքին նիւթը միեւնոյն բնութիւնն ունի եւ միեւնոյն յօդուածին մասունքը կը կազմէ : Ահաւասիկ յաջորդ յօդուածը :

« Յօդ. 3. Միացեալ տուրքը տարեկան է եւ բաժնի վրայ հիմնեալ է »

Արդ կառաջարկեմ այս Բ եւ Գ. յօդուածներն ընդ իրենարս ըծրողել, բարեփոխելով այսպէս :

« Իւրաքանչիւր ազգային անհատ որ չափահաս է եւ վաստակի տէր պարտի այս երկու տուրքը միացեալ վճարել, որ տարեկան է եւ բաժնի վրայ հիմնեալ » :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարար Համարակալութեան ղիւանի) Այս միացման դէմ Համարակալութեան ղիւանն առարկութիւն մ'ընելու պէտք չզգաց, եւ ժողովին կամքին կը թողու ստաջարկեալ բարեփոխումը :

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ փաշան քուէի կը դնէ Մէրեէմ-Գուլի էֆէնտիին առաջարկած բարեփոխումն եւ ժողովը ընդունելով զայն միաձայն՝ Բ. եւ Գ. յօդուածներն ի ՄԻ կ'ընդունի ըստ խմբագրութեան Մէրեէմ-Գուլի էֆէնտիի եւ կանցնի յաջորդ յօդուածին :

Յօդ. 4. Մէկ բաժնին է մայրաքաղաքիս համար 20 դրշ. արծաթ. իսկ գաւառաց համար 10 դուրուշ :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը, ժողովը միաձայն կ'ընդունի զայն ամփոփելու եւ կանցնի յաջորդին :

Յօդ. 5. Իւրաքանչիւր անհատ պարտի իւր կարողութեան չափով՝ բաժնի վճարել, որոյ հիմն է իւր երկօրեայ վաստակը :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ փաշան քուէի դնելով

լով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունի զայն ամփոփելու եւ կանցնի յաջորդին :

Յօդ. 6. Իւրաքանչիւր ոք ինք կորոշէ իւր տրոց բաժնը համահաճութեամբ իւր Թաղ. խորհրդին, այն որ պաշտօնական ծանուցումն մինչեւ մէկ ամիս կը յապաղէ իւր տրոց բաժնին որոշել, իւր այս իրաւունքը Թաղ. խորհրդոյ թողած կըլլայ, որով եւ Թաղ. խորհուրդն ինքնին կը սահմանէ այսպիսեաց տրոց բաժնին :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Խօսք ուղեցի՝ իւրաքանչիւր ոք իւր տրոց բաժնին ինք որոշելու սկզբան դէմ խօսելու համար, բայց յօդուածին ընթերցումը շարունակուելով տեսայ որ Թաղ. խորհրդին համահաճութեամբ պիտի որոշէ, ուստի այլ եւս ըսելիք չունիմ եւ կընդունիմ այս յօդուածը :

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունի զայն ամփոփելու եւ կանցնի յաջորդին :

Յօդ. 7. Թաղ. խորհուրդը կը հաւաքեն ազգային տուրքն, իւրաքանչիւրն իւր թաղին մէջ բնակող ազգայիններէն :

Որ եւ է գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենապետ փաշան քուէի դնելով սոյն յօդուածը՝ ժողովը միաձայն կ'ընդունի զայն ամփոփելու եւ կանցնի յաջորդին :

Յօդ. 8. Ազգային տուրքը մէկ անգամով կանխիկ կը վճարուի, բայց ուզողն ազատ է վեց ամիսն անգամ մը կ'էտուակէս վճարել, ի 1 Մայիսի եւ ի 1 Նոյեմբերի :

(Պահ մը լուռութենէ ետեւ)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Դուք լուռութիւն կը պահէք, ուրեմն ներեցէք որ ես գիտողութիւն մ'ընեմ : Այս յօդուածին երկու պարբերութիւններն իրարու հակասական կը թուին ինձ, վասն զի կը տեսնէք որ առաջինով կը

տրամադրութի թէ Ազգ. տուրքը կանխիկ վճարելի է, իսկ երկրորդով ուղղուն ազատ կը թողնուի երկու անգամով հատուցանելու: Ուստի կարծեմ թէ այս յօդուածը փոքրիկ սրբազորութեան մը կը կարօտի:

ՄԷԻՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կերեւի թէ այն դիտմամբ այսպէս խմբագրուած է յօդուածն որ ազգային ծախուց մասնակցի ուղղուելու միանգամով տուրքը վճարելու դիւրութիւն չունեցողներն՝ կարենան օգուտ քաղել այդ տրամադրութենէն: Սակայն մեր քաղքին մէջ սակաւաթիւ են այն անձերն որ իրենց համար որոշեալ տրոց բաժինը չկարենան միանգամով հատուցանել եւ պայմանաժամերու կարօտին, մանաւանդ որ երկու անգամով տրոց հաւաքումը արձանագրութեան գործողութեանց մէջ դժուարութիւններ յարուցանելու առիթ մ'է. ուստի միայն անկարողներու դիւրութիւն ընծայելու համար ես կառաջարկեմ այդ յօդուածին խմբագրութիւնը բարեփոխել սապէս, « Ազգ. տուրքը մէկ անգամով կանխիկ կը վճարուի, բայց դիւրութիւն չունեցողն ազատ է վեց ամիսն անգամ մը կէս առ կէս վճարել, ի մէկ մայիսի եւ 1 նոյեմբերի »: Այս կերպով միայն անկարողները դիւրութիւն կը վայելեն, իսկ միւս կողմէ կարողներուն անձնասիրութեան կը դպչի փորձել անտի օգտելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ, բայց եթէ կարող անձինք ալ փորձեն օգտիլ այդ տրամադրութենէն, հետեւանքն ինչ պիտի ըլլայ, կարող անկարողի խնդիր չի՞ ծագիր եւ տրոց հաւաքումը չի՞ փոթութեանց չի՞ պատահիր:

ՄԷԻՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այսպիսի պարագայի մէջ անշուշտ վարչութիւնն իրաւունք կունենայ միջամտելու եւ կարող անձերէն բացարձակ կերպով ամբողջ վճարումը պահանջելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Տեղեկարար Համարակալութեան ղեկանի.) Համարակալութեան ղեկանը կը յայտնէ թէ ժողովն այս յօդուածն

անփոփոխ ընդունելով լաւ կանոն մը քուէարկած կը լինի: Բայց լաւագոյն կը ըլլայ անոր պարբերութիւնները յեղաշրջել եւ ինչպէս նախորդ կանոնագրին մէջ խմբագրուած էր տուրքը երկու անգամով վեց ամիս վեց ամիս կանխիկ վճարելի սահմանել, եւ ընդունիլ որ, մէկ անգամով ամբողջ վճարելու ազատութիւն տրուի որոց որ կամին Զի արդարեւ մարդ որքան ալ կարող լինի, երբ վճարք մը մասնաժամս կատարէ, դիւրութիւն եւ յօժարութիւն կզգայ. իսկ անոնք որ կանխիկ կուզեն սալ ամբողջը, զիրենք արգելող չըլլար այդպէս ընելու:

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Շատ իրաւամբ դիտեց Մէրեք-Գուլի էֆէնտին թէ Պոլսոյ մէջ սակաւաթիւ են այն անձերն որ անկարող լինին միանգամով վճարելու իրենց համար, որոշուած տարեկան տուրքը: Այս դասու անձանց համար եթէ վճարումը երեք մասի ալ բաժնես. տակաւին անօգուտ է ըստ իս, վասն զի այն որ 20 դահեկան մէկէն չէ կարող վճարել, անկէ այդ տուրքն առնելն ալ շատ արդար եւ բանաւոր չէ ըստ իս, եւ լաւալ գոյն է ոչինչ պահանջել, քան թէ տուրք առնելու յուսով՝ կանոնին մէջ այնպիսի տրամադրութիւն մը դնել, որ ահնակաւ օգուտը չընծայելէ զատ՝ տեղի տայ նաեւ ուրիշ դժուարութեանց: Ուստի ես այս մտածումով կընդունիմ Բ. յօդուածին առաջին պարբերութիւնն, այն է Ազգ. տուրքը կանխիկ միանգամով վճարելու տրամադրութիւնն, իսկ երկրորդն՝ այսինքն մասնակի վճարմանց պարբերութիւնը կը մերժեմ, եւ անոր բարձումը կառաջարկեմ:

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — (Ի դիմաց Քաղ. ժողովոյ) Որովհետեւ իւրաքանչիւր անհատի երկօրեայ վաստակը հիմ բռնուած էր կարողութեան. եւ տուրքը բաժնի վրայ լինելով մայրաքաղաքիս համար 20 դրուչ սահմանուած էր բաժինը, վարչութիւնը մտածեց թէ օրը 10 դրուչ վաստակողն ալ տրոց պիտի մասնակցէր, ուստի եւ հարկ դատեց դիւրութիւն մ'ընծայելու մտօք՝ երկու մասի բաժնել վճա-

րումը Ուրիշ խնդիր է թէ անկարողը բոլորովին զերծ է տրոց մասնակցութենէ:

ՄԷԻՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այս խնդրոյն մէջ իմ կարծիքս ալ հարցուեցաւ եւ ես էի սնդոզն որ տուրքը բաժնի վրայ լինի, եւ երկօրեայ վաստակը հիմ բռնութի կարողութեան, վասն զի փորձը ցոյց տուած էր որ իւրաքանչիւր անհատի կարողութեան չափն որոշելու մէջ մեծ դժուարութիւն կար, շատերուն վիճակն անստոյգ կը մնար. եւ միայն փոքրագոյն մաս մը կը վճարէր տուրքը, մեծագոյն մասը զերծ մնալով. բայց արդի դրութիւնն արդէն բաժնի վերածած լինելով տուրքն, եւ անոր հիմն երկօրեայ վաստակն, արդէն ինքնին մեծ դիւրութիւն մ'ընծայած է վճարողաց ուստի ես բացարձակապէս դէմ եմ երկու անգամով տուրք դանձելու դրութեան, եւ այդ թոյլտուութիւնը շատ շատ անկարողներուն ընծայել պատշաճ կը տեսնեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Վէճի նիւթ եզող այս Բ. յօդուածը կը արամադրէ որ Ազգ. տուրքը մէկ անգամով կանխիկ վճարուի, բայց ուղղուն ազատ լինի երկու անգամով հատուցանելու: Այս յօդուածին համար երկու բարեփոխում առաջարկուեցաւ, մին՝ զոր Մէրեք-Գուլի էֆէնտին առաջարկեց, այն է որ միայն անկարողներու թոյլտուութիւն լինի երկու անգամով վճարելու, եւ ոչ թէ ամէն այսպէս ուղղին. երկրորդը՝ զոր Մէլիքեան Գարեգին էֆէնտի առաջարկեց, այն է՝ որ այդ պարբերութիւնն իբր աւելորդ եւ անօգուտ բոլորովին ջնջուի, եւ Ազգ. տուրքը բացարձակապէս ի մի նուազ եւ կանխիկ վճարել սահմանուի: Այս երկու բարեփոխումները քուէ պիտի դնեմ այժմ, ըստ կանոնի վերջինէն սկսելով:

Հետեւապէս Ատենապետ փաշան քուէի կը դնէ այս վերջին բարեփոխումն եւ ժողովը՝ 10 քուէի ընդդէմ 18 քուէով նոյն բարեփոխութեամբ կ'ընդունի Բ. յօդուածը, որ կը բարեփոխուի սապէս,

« Ազգային տուրքը մէկ անգամով կանխիկ կը վճարուի, մայիս ամսոյ սկիզբը: »

Յօդ. Գ. Երմտական տարւոյն մէջ (որ Մայիսի 1 էն կսկսի եւ յաջորդ տարւոյ ապրիլ 30 ին կաւարտի) իւր տուրքը չվճարող անհատը պարտի իւրաքանչիւր բաժնի համար մէկ քառորդ մէճիտ աւելի վճարել, որ կրկնելի է ամեն յապաղեալ տարւոյ համար:

ՉԷՐԱՋ Գ. ԷՖ. — Այս իններորդ յօդուածն ըստ իս բաւական անգործադրելի կը թուի, վասն զի իրենց ազգային տուրքը չը վճարողներուն պարտքը տուգանքներով պիտի բաղմապատկի եւ աճի, այնպէս որ ժամանակ մը պիտի դայ որ այլ եւս դժար, եւ մինչեւ իսկ անհար պիտի լինի դայն գանձել: Իւր տուրքը չվճարող անձը շատ պատճառներ կըրնայ ունենալ, կամ անկարող կը ըլլայ, եւ կամ չուզեր հատուցանել, բայց ինչ որ ալ ըլլայ պատճառը սա ճշմարիտ է որ այս դրութեամբ վերջը բնաւ ստակ մը չի պիտի կրնայ առնուիլ, եւ մենք պիտի նպաստած ըլլանք այս վիճակին, այսպիսի կանոն մը ընելով, որ 1/10 մը 25 տոկոս պահանջել ըսել է, եւ որ հակառակ է արդարութեան:

Եթէ դաւառաց մէջ տեղական իշխանութիւնն այսպիսի օրէնք մը դնէր արքունի տրոց համար, ոչ ապաքէն մենք պիտի ըլլայինք անոր դէմ առաջին գանդատողներն եւ մեր Արքազան Պատրիարքը պիտի փութար Բ. Դրբան թագրի մ'ուղղել առժամայն եւ բողոք բառնալ ասոր դէմ:

Սակայն կը տեսնեմ նաեւ որ Համարակալութեան ղեկանն ալ բնաւ խտիր մը չը դներ իւր տուրքը ժամանակին վճարողին եւ ստիպմամբ եւ անազան վճարողին մէջ, այս ալ շատ արդարացի չեմ գտներ, եւ կը կարծեմ թէ հարկ է այս երկուքին մէջ չափաւոր եւ բանաւոր պայման մը դնել, Համարակալութեան ղեկանն ընդունած է արդէն կերպով մը տուգանքի սկզբունքն, ուստի կրնայ մէկ քառորդ մէճիտ տուգանք սահմանուիլ:

բայց ոչ ամէն յարազեալ տարւոյ համար անոր քանակութիւնը կրկնապատկելու պայմանաւ, եւ այդ յօդուածին մէջէն՝ կրկնելի բառը վերջնելով ըսել « Իւր տուրքը չվճարող անհատը պարտի իւրաքանչիւր բաժնի համար մէկ քառորդ մէճիտ աւելի վճարել, ամէն յարազեալ տարւոյ համար»: Միայն կը մնայ խումբագրական կէտ մը, երկու տեղ՝ համար բառը կրկնուած է. եւ այս ալ կրնայ սրբագրուիլ: Թողո՞վն այս բարեփոխումն ընդունելով՝ զիւրազործադրելի եւ արդար կանոն մը բուժարկած կը լինի, ուստի կառավարկեմ կրկնելի բառը վերջնել այդ յօդուածի մէջէն:

ՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՑ. — Այս խնդիրը կարծէ որ ժողովին ուշադրութիւնը պահ մը դրաւ է, զի ըստ իս այս տեղ է օրէնքին գործադրութիւնը: Ինձմէ առաջ խօսող ատենաբանն ըսաւ որ եթէ գաւառաց մէջ տեղական իշխանութիւնները՝ տրոց վրայ այսպիսի օրէնք մը դնէին, պիտի բողոքէր Սրբազան Պատրիարքն: Այո՛, այսպիսի պարագայի մը մէջ Սրբազան Պատրիարքը բողոքելու իրաւունք ունի, վասն զի Տէրութիւնն իւր արքունի տուրքը չվճարողին դէմ բուռն միջոցներ ի գործ կը դնէ, եւ վերջապէս կը հարկադրէ զայն իւր պարտքը հատուցանելու, եւ այլ եւս տուգանք պահանջելու հարկ չմնար: Իսկ մեր տուրքն այս վիճակին մէջ չէ, ամէն մարդ իւր թաղին Թաղ խորհրդոյ համաձայնութեամբ կորոչէ իւր տալիք տրոց քանակութիւնը կամ բաժնին, որ մէկ քսաննոց մէճիտի է, եւ անկարողն ալ բողոքովին զերծ է տուրքէ: Այսքան զիւրութիւններէ ետեւ՝ երբ ազգային անհատ մը չուղեր վճարել իւր պարտքը տարիներով, ի հարկէ կը բարդուի, եւ երբ իւր մէկ գործը գայ Պատրիարքարան կամ Թաղ խորհրդարանն, այն ատեն կամայ ակամայ պիտի վճարէ: Արդ՝ ո՞վ եղաւ տուրքը զիզող եւ բարդողն, մզգը թէ ինք: Եթէ ժամանակին վճարէր իւր տրոց բաժինը, զիւրութեամբ պիտի լուծուէր խնդիրն, իրաւ իւր տալիք քսաննոց մէճիտը մեծ բան մը չէ, բայց երբ տասը հազար հողի այսպէս վճարէր իւր պարտքը, մեծ գումար մը կը

մտնէր կեդր. մտտուկը, Արշալոյսի ծախքերը կը հոգացուէին, պաշտօնակալք իրենց թոշակները ժամանակին կատանային, եւ ազգին գործերը կը տեսնուէին կանոնաւորութեամբ: Եթէ ամեն մարդ իւր տրոց վճարումը յետաձգէ, գործ մ'ունեցած ժամանակը կը վճարեմ ըսելով, կարելի է տասը տարի իւր գործը չպատահի, կամ թերեւս երբէք, եւ այն ատեն՝ ինչպէս կեդր. մտտուկը դրամ պիտի մտնէ, ինչպէս պիտի տեսնուին գործերը, ուրեմն կրնդունիմ որ տուգանքը խթան մ'է, զի գեւ մեք վարժուած չենք տուրքի:

Ըսուեցաւ թէ սահմանուած տուգանքն 0/10 ին 25 տոկոս ըսել է, եւ այս ալ արդարութեան հակառակ է, ո՞վ կը բռնադատէ ըզմեզ որ մեր տուրքը չվճարենք եւ տուգանքով հատուցանեմք ի վերջէ: Երբ մեր ազգային իրաւունքները պահանջելու վրայ ըլլայ խնդիրն, ամենքս տուրք կը դառնանք, բայց երբ մեր պարտքը պահանջուի, ծանր կուգայ մեզի եւ կը տժգոհինք:

Ես բազմաթիւ հաւաքիչներ զիտեմ որ ստմանակ ի ձեռին ներկայացած են տուրք խնդրելու համար, եւ վստահեմ են, « ժամանակը գտար հիմա գալու, գնա բանդ » կըսեն եւ կը մերժեն: Եւ հոս՝ տեղն է ըսել որ եթէ մեր ազգային գործերը մինչեւ ցարդ չեն կրցած կատարելու բարեկարգութեան մէջ մտնել, եւ մեր Արշալոյսիւններն չեն կրցած մեծ արդիւնքներ յառաջ բերել, պատճառն միշտ այս դրամական անկարգ վիճակն եղած է, ուստի պէտք է վերջնապէս կարգադրել զայն:

Արդ՝ քանի որ մինչեւ ցարդ, այս տրոց վճարման խնդիրը չէ կրցեր կարգի մը դրուուիլ, ըստ իս առաջարկուած դրութեանէն աւելի ազատամիտ եւ գործադրելի դրութիւն չկրնար ըլլալ, ուստի ես այդ խնդրորդ յօդուածը կընդունիմ անպիտոսի:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՑ. — Տրոց հաւաքումը զիւրացնելու համար տուգանք մը սահմանել կառավարկուի, տուգանքը պատիժ մ'է, եւ պատիժը յանցանք մը կենթադրէ, ըսել է կենթադրուի թէ մաս մը կայ ազգին մէջ, եւ բաւական ստուար եւ զօրաւոր, որ իւր տուրք

ը վճարել չուզեր, եւ հարկադրելու համար զայն որ իւր պարտքը հատուցանէ, տուգանք մը սահմանել հարկ կըլլայ: Սահմանադրութեան հաստատութենէն մինչեւ ցարդ՝ տրոց շատ կանոնադրեր ունեցանք, Ազգային ժողովն շատ անգամներ այս խնդիրը քննեց, ուսումնասիրեց եւ իւր խորհրդակցութեանց նիւթը բաւ զայն, սակայն կարող ենք հաստատապէս ըսել թէ կրցանք ունենալ ինչ որ պէտք էր, թէ կրցանք հաստատել բաշխման եւ հաւաքման մի այնպիսի դրութիւն՝ որ կանոնաւոր, արդար եւ գործադրելի լինէր — ո՛չ:

Արդարեւ Ազգ. տուրքէն շատ աննշան քանակութեամբ գումար մը կրցաւ հաւաքուիլ ամէն տարի. բայց յանցանքն աւելի մերն է քան ժողովրդեան, մերն, որ կանոնաւոր դրութեամբ չկատարեցինք հաւաքումը եւ չյաջողեցանք արդիւնք մը քաղել: Ես կը կարծեմ որ եթէ բաշխման արդար օրէնք մը, հաւաքման գործնական դրութիւն մ'ունենայինք, տուգանք մը սահմանելու, չվճարողաց դէմ պատիժ մը անօրինելու խորհուրդն անգամ չպիտի յղանայինք, վասն զի շատ հաւանական է որ ժողովուրդն ընդհանրապէս զիւրութեամբ եւ յօժարապիտի պիտի մասնակցէր ազգային ծախուց, եւ եթէ մաս մը գտնուէր իւր պարտաւորութենէն նահանջող, թուով այնքան աննշան պիտի ըլլար, որ մեր ուշադրութիւնն անգամ չի պիտի գրաւէր որ տուգանք մտաբէրէինք: Երբ է որ՝ ամէն երկրի մէջ տուրքը բռնի կը պահանջուի, բայց չկայ կառավարութիւն մ'որ ընդ նմին տուգանք մ'ալ պահանջէ վճարումը յարազած ըլլալուն կամ դժկամակ գտնուելուն համար: Առարկեն թերեւս որ մեր քուէարկելի կանոնաց նոր ծրագիրը, կանոնաւոր դրութեան մը պիտի վերածէ տրոց բաշխումը եւ հաւաքումը, ամէն ոք զիւրութիւն պիտի գտնէ ժամանակին եւ կանոնաւոր կերպով իւր տուրքը վճարելու, որ պիտի սահմանուի արդարութեամբ, եւ այսպէս կատարելագործեալ դրութիւն մը հաստատուելէ ետեւ՝ այլ եւս հարկ է որ մի խտիր դրուի վճարողին եւ չվճարողին մէջ, եւ այս վերջիններուն համար տուգանք մը սահմանուի իբր խթան: Բայց վստահ էք թէ հաւաքման

արդի եղանակն ապահով եւ գործադրելի հիման մը վրայ դրուած լինի, երբ Թաղ խորհրդոց յանձնուի հաւաքումն, Երաւ, այս նոր օրէնքը Թաղ խորհուրդները հարկադրելու համար՝ որ չգանդաղին այս գործին մէջ, գեղեցիկ բաժին մը կը նուիրէ անոնց. այսինքն հաւաքածոյ արդեանց կէտը կը թողու իբր թաղային տուրք, զոր այս անգամ կեդրոնականին հետ ի մի ձուլուր կցորդեր է, բայց մենք փորձով գիտենք որ Թաղ խորհուրդներն այս խնդրոյն մէջ շատ անփոյթ եւ անտարբեր գտնուած են ցարդ. ես իսկ անգամ մը տրոց բաշխման Յանձնախմբի մը մէջ գտնուեցայ եւ դեռ կը յիշեմ թէ ինչ անտարբերութեանց եւ դժուարութեանց հանդիպեցանք: Արդ այս կըրկին տրոց միացումն որքան ալ շարժիչ զօրութիւն մ'ունենայ զանոնք աշխատութեան զբողելու, տակաւին ես չեմ կրնար՝ առանց զործադրութեան արդիւնքը տեսնելու՝ կատարելապէս հաւատալ որ պէտք եղածին շափ այս գործն անոնց խնամոց եւ փութոյն առարկան պիտի դառնայ: Երբ մենք վտտահ չենք մեր սահմանած դրութեան կատարելութեան վրայ, ինչպէս կրնանք մի այնպիսի պատիժ սահմանել, որ թուարանական հաշուով հինգ տարի ետեւ՝ պիտի եռապատկէ եւ քառապատկէ տրոց նախորդ քանակութիւնը, եւ որ մ'այլ եւս անհար լինելով այսպիսի մեծաքանակ գումար մը գանձել, կամայ ակամայ պիտի ստիպուինք հուսկ յետոյ բաշխել մեր պահանջը: Ես չեմ կարծեր որ այս տուգանաց արամադրութիւնն արգարութեան համաձայն եւ գործադրական հանգամանք ունեցող միջոց մ'ըլլայ, ուստի եւ եզրակացնելով խօսքս կառավարկեմ որ առանց տուգանքի կէտը նրկատողութեան առնելու այժմէն, ի բաց թողուք զայն ծրագրէն, եւ առ այժմ փորձենք մենք այս նոր դրութիւնը, նոր օրէնքը, զոր կը բերէ մեզ Արշալոյսիւնն, կանոնաւորել, եւ գործադրութեան արդիւնքը տեսնելէ ետեւ՝ երբ համոզուինք թէ հարկ է տուգանքի խնդիրը յուզելու, այն ատեն առնունք զայն նկատողութեան:

ՄԵԼԻՔԵԱՆ ԳՈՒԼԻ Յ. ԷՑ. — Երբ օրէնք մը

կը սահմանուի, տարակոյս չկայ թէ անոր ենթարկեալն իրաւունք ունի օրինաց ամէն տրամադրութիւններէն եւ գիւրութիւններէն օգուտ քաղելու, եւ երբ իւր օգուտն անտես կառնէ, այն ատեն օրէնքն՝ անոր դէմ կը խտտանայ, եւ իրաւունք չունենար դանդաւակու: Այս խնդրոյն մէջ՝ կը տեսնէք որ առաջարկեալ օրէնքը նախ կանխիկ կը պահանջէ տուրքըն, եւ վերջապէս մինչեւ մէկ տարի պայմանաժամ կուտայ վճարման: Իսկ երբ այդ տարւոյն մէջ դժկամակող կըլլայ իւր տուրքը վճարելու, այն ատեն կը խտտանայ եւ կը հարկադրէ զայն իւրաքանչիւր բաժնի համար աւելի գումար մը վճարելու: Ինչո՞ւ ուրեմն օգուտ չքաղել անոր թոյլտու տրամադրութեանէն, եւ ենթարկել ի վերջէ անոր խտտութեանը, հարկադրուելով աւելի գումար մը վճարելու: Բայց այս աւելորդը, զոր դուք տուգանք կանուանէք, առանց ծրագրին մէջ այսպիսի բառ մը յիշատակուած ըլլալու, չեմ կարծեր որ Արշութիւնն իրր տուգանք սահմանած լինի, այլ կերելի թէ պարզապէս արձանագրութեան տուրք մ'է, վասն զի յայտնի է որ տրոց հաշիւն իրեն յատուկ տոււարն ունի, պարտքը հատուցանողին հաշիւը կը գոցուի, իսկ չվճարողինը ամի ամի նոր տարւոյ հաշուոյն կը փոխանցի, խել մը տոււարական գործողութիւններ, որոնք աշխատութեան եւ պաշտօնակալի կը կարօտին, եւորոց փոխարէն Արշութիւնը կը պարտաւորի արձանագրութեան տուրք մը դնելու: Անոնք որ կը քննադատեն այս յաւելուածական տուրքը, քանակութեան չափազանցութիւնը իրենց փաստ կառնուն, սակայն այս ուղղակի պատասխան չէ խնդրոյն, այլ պէտք է որ սկզբունքն ընդունած լինին եւ գումարին չափաւորումը պահանջեն: Կառարկեն թէ ուրիշ երկիրներու մէջ ուղղակի տրոց մասին տուգանք չկայ գրուած: ստոյգ է, բայց կը մոռնան որ անուղղակի տրոց վերայ է այդ տուգանքը: մանաւանդ Անգղիոյ մէջ, ինչպէս ստուգած եմ, այնքան ահագին է անոր քանակութիւնն, որ մինչեւ որոշեալ գումարին վաթսուսպատիկը կառնուի պատճառ, վասն զի կառավարութիւններն՝ որ իշխանական միջոցներ ունին ի ձեռին, բանի կը

զանձեն ուղղակի տուրքերն՝ չվճարողներէն, եւ հարկ չմնար տուգանքի: Իսկ անուղղակի տրոց վերայ՝ կը դնեն զայն, վասն զի միջոց չունին զայն բունի դանձելու: Իսկ մեր դրից մէջ տարբեր երեւոյթ ունին իրերն, անուղղակի տուրքերն անվրէպ վճարուելու վիճակին մէջ են, եւ զանցառութիւն կարելի չէ, իսկ ուղղակի տուրքն շտուգներուն դէմ՝ վասն զի բունն միջոցներ չկան գործադրելի, յապաղմանց համար շատ գրուելիքն այդ տուգանքն է, որ ինչպէս ըսի արդէն, արձանագրութեան տուրք մ'է աւելի քան թէ տուգանք:

Այս տեսութեամբ կընդունիմ ես Արշութեան առաջարկած սկզբունքն, զի չվճարողները հարկադրելու համար առկէ դուրս ուրիշ միջոց մը չեմ գտներ: Իսկ եթէ քանակութեանը վրայ է որ խնդիր կը յուզեն, եւ զայն չափազանց կը գտնեն, այդ ուրիշ խնդիր պատրաստ ենք զիրենք լսելու:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես տուգանքի սկզբան դէմ եմ, եւ երբ մէկը իւր յետեալ տուրքերն ամբողջովի վճարել պարտաւորի իւր գործը եկած ատեն, այս իրեն բաւական տուգանք մ'է եւ դաս, միւս եւս վճարքը չյետաձգելու համար: Ձեմ ուզեր որ մեր ազգին բարոյական արժանիքը նուաստացնող օրէնքներ ունենանք, այլ կառաջարկեմ այնպիսի օրէնքներ հրատարակել, որ մեր ներքին բարոյական վիճակը բարձրացնելու ծառայեն, բարեկարգութեան խնդիրն ըսել կուզեմ, որ բարձի թողի եղած է: Անոնք որ կը կարծեն զիտնալ թէ ժողովուրդը չուզեր տուրք վճարել, կը սխալին: մեր համայն ազգային հաստատութիւններն ժողովրդեան տրօքն կանգուն կը կենան: Բայց թէ ինչո՞ւ կը յապաղեն երբեմն տուրքը, կը պատասխանեմ թէ մինչեւ ցարդ օրինաւոր գրութիւն չկար, եւ երբ հաստատենք զայն միանգամ, ամենայն սիրով կը վճարեն: Գալով հաւաքումը Թաղ. խորհրդոց յանձնելու առաջարկութեան, կըսեմ թէ այնքան տրամադիր չեն անոնք, վասն զի շատ ծանրաբեռնեալ են, եւ շատ անգամ իրենց թաղային տուրքերն հաւաքելու համար իսկ կը գեղեկին. ուստի ըստ իս լաւագոյն է ամէն

դուրութիւն ընծայել ժողովրդեան եւ ուղակի կատարել հաւաքումը, հաւաքիչու թիւերն յաւելցնելով:

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — (Տեղեկարեր Համարակալութեան դիւանի) Համարակալութեան դիւանն այդ իններորդ յօդուածը մերժած է, թէ եւ կարճ բացատրութեամբ մը, բայց դուրսը պատճառներով: Այդ յօդուածին տրամադրութեամբ տարին մէկ բաժին, այն է 20 դրչ տուրք տուողը՝ տարւոյն վերջը 25 դրչ տուրք պիտի վճարէ, եւ չորս տարուան մէջ մէկ բաժին աւելի: այս համեմատութեամբ նաեւ 5 բաժին, այն է 100 դրչ տուողը, 5 էրբէմ-Գուլի էֆէնտին այս յաւելեալ մասն իրարձանագրութեան տուրք կը նկատէ, եւ դիտել կուտայ որ Արշութիւնը տուգանք բառը չէ գործածած իւր ծրագրին մէջ, բայց բառը չը դնելով իրեն ընութիւնը չփոխուիր, եւ տուգանքը չդադրիր տուգանք մ'ըլլալէ: Բայց թէ հարկ է այսպիսի տրամադրութիւն մ'ընդունիլ մեր կանոնաց մէջ, այս է խընդիրը: Յայտնի է որ օրէնքները իւրաքանչիւր ժողովրդեան բարուց եւ վիճակին համաձայն կը սահմանուին, եւ Համարակալութեան դիւանը կը մտածէ թէ այս օրէնքը մեր ժողովրդեան արդի վիճակին չհամաձայնիր բնաւ: Մեր ազգային իշխանութիւնը սոսկ բարոյական իշխանութիւն մ'է եւ թոյլտու, եւ դիտէք ինչ աստիճան նոյն իսկ այս տրոց խնդրոյն մէջ, բացատրեմ Ձեզ, եւ կազաչեմ ուղղութիւն ըրէք: Տիրող օրէնք է որ գործով Պատրիարքարան զըմողներէն իրենց որոշեալ տուրքերը կը գանձուին, գործ ունեցողները Պատրիարքարան կերթան եւ հաւաքիչը կը քննէ տոււարներէն որ ինը տարեկան պարտք ունին զիրեալ, եւ այդ գումարին վճարումը կը խնդրէ, պարտականք կընդդիմանան հաւաքիչը կընդդիմանայ եւ կը պահանջէ, կը որոնակին, եւ վերջապէս կը դիմեն, որո՞ւ, Արքայան Պատրիարք հօր, եւ զանազան պատճառներ մէջ կը բերեն, կաղերսեն, եւ վերջապէս նորին Արքայութիւնը հրաման կընէ որ անոնց գործը տեսնեն, եւ այսպէս առանց ամբողջապէս վճարելու՝ մաս մը կը հատու-

ցանեն եւ գործերնին կատարել տալով կենեն կերթան: Այս նոյն իսկ իրենց պարտքն եղած տրոց համար, հաղա երբ տուգանք մ'ալ զըրուի, ով կրնայ հաւաստել թէ պիտի վճարուի: Այսպիսի վիճակի մը մէջ՝ այսպիսի հայրական իշխանութեան մը ներքեւ՝ այնպիսի կանոններ պէտք է որ կարելի ըլլայ գործադրութիւնը տեսնել: Ասիէ չորս տարի առաջ՝ Արշութիւն մը նոր ծրագիր մը բերաւ, տրոց աստիճանները փոփոխեր, ամենէն ստորին աստիճանը 5 դրչ. սահմաներ էր, այն երեւակայական հաշուով թէ մեծաքանակ գումար պիտի դանձուէր, հաշիւներ՝ զոր երբեմն ուրիշներ ալ կընեն, եւ ազգային թերթեր կը հրատարակեն, օրինակի համար կը խորհին թէ 2 դրչ. մարդ զըրուի տուրք մ'առնուի, եւ ըստ որում այսքան միլեօն հոգի կայ, կը գոյանայ այսքան միլեօն դրչ: Ինչ գեղեցիկ հաշիւներ թղթի վրայ, բայց գործադրութեան մէջ՝ խաբուսիկ: Ազգ. ժողովն այն ատեն՝ երբ Արշութեան այդ ծրագիրն եկաւ ընդունեց, հաւաքման եղանակըն ալ անոր տնօրէնութեանը վերապահեց, վասն զի «մի կաշկանդէք զմեզ օրինաց կապը՝ որ կարող ըլլանք ազատ ձեռքով գործել» կըսէին, սակայն ահաւասիկ արդի Արշութիւնն՝ այդ այնքան յուսալից կանոնագրէն յոյսը կտրած նորը կը բերէ, տուրքը բաժնի վրայ կը հիմնէ, երկօրեայ վաստակը կարողութեան աստիճանացոյց կը սահմանէ, Ազգրոնական եւ Թաղական տուրքը ընդ իրեարս կը լըծորդէ, եւ հաւաքումն ալ Թաղ. խորհրդոց կը յանձնէ: Բայց միթէ այս նոր գրութիւնն ալ պիտի յաջողի՞ թէ ոչ, փո ձը պիտի հաստատուէ, եւ եթէ այն ալ վիժի, անշուշտ նորէն պիտի գառնայ զայ խնդիրն հոս, եւ հետզհետէ հասնի գրութիւնը մի կատարելութեան: Բայց սա ճշմարտ է որ մինչեւ ցարդ կանոնաւոր գրութիւն մը չէր գործադրուած, որ կարելի լինի արժանապէս ըմբռնել թէ մինչեւ որ աստիճան պէտք կայ տուգանք դնելու, ցարդ գործադրուած գրութիւնն զիալք որն է, քանի մը հարիւր անձինք կան որոշեալ եւ ծանօթ, եւ հաւաքիչը ամեն տարի անոնց կը դիմեն, եւ կատանանան տուրքն: Իսկ այժմ նոր գրութեան համաձայն հաւաքումը թաղե-

ը պիտի ընեն, եւ ըստ 10 ըդ. յօդուածոյ քաղաքական գործոց համար զխնդրներէն պիտի պահանջուին յետեակ տուրքերը, բաւ համարելու է այս միջոցը եւ փորձելու է, ուստի Համարակալութեան զիւանը կառաջարկէ այդ խնդրոց յօդուածին բարձուը:

ՊԱԼԵՕԶԷԱՆ Լ. ԷՖ. — (Ի զիմաց Քաղ ժողովոյ) Այս խնդրոյն վրայ այսքան խօսուելէ ետեւ պիտի յայտնեմ հիմա թէ ինչ էր Վարչութեան նպատակն որ այս յօդուածն գրած էր: Վարչութիւնը՝ նախխորհեցաւ թէ ամէն իրաւունք փոխադարձ պարտաւորութիւն մը կենթադրէ, եւ անձնիւր անհատ իւր վայելած ազգային իրաւունքներուն փոխարէն, այս տրոց վճարմամբը պիտի կատարէր իւր պարտաւորութիւնը. ուստի այս տուրքն անխուսափելի է: Ի հարկէ երբ մարդ մը իւր պարտաւորութիւնը չեր կատարէր, բան մը տուժելու կտար պիտի, եւ անհատակ այն յաւելեալ տուրքն է այս, զոր պիտի հարկադրի վճարել: Երկրորդ՝ պարտակատարին եւ պարտազանցին մէջ տարբերութիւն մը պէտք էր զնել. իրենց պարտքը չհատուցանողները արդեւք եղած էին ազգային գործոց ընթացքին կանոնաւորութեանը. վասն զի կեղծ. մտուկն իւր զրամական միջոցէն զրկած էին, ուստի միւսներուն հետ մի եւ նոյն վիճակին մէջ չէին կրնար զրուիլ. եւ անա զարձեակ իրաւունք մը աւելորդ գումար մը պահանջելու համար, որ իրենց զանցառութեամբը Պատրիարքարանի պատճառած արձանագրական գործողութեանց աշխատութեանը մէկ փոխարէնն է, ինչպէս ըսաւ Մէրեմ-Գուլի Էֆէնտին: Վարչութիւնն այս խորհրդածութիւններով անհրաժեշտ կը դատի այս յօդուածն եւ կը կարծէ թէ առանց ասոր տրոց հաւաքման յաջողութիւնն ապահովեալ չէ:

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Կը տեսնեմ որ կարծիքներու տարբերութիւնը շատցաւ. Պալիօզեան էֆէնտին Վարչութեան նկատմանը բացատրելով կը պնդէ այդ յօդուածին վրայ, եւ ուրիշներն անոր բարձուը կառաջարկեն, բայց 10 ըդ. յօդուածը որ քիչ մ'ետեւ պիտի

կարդացուի, խնդիրը պարզելու պիտի ծառայէ, եւ հաստատէ թէ այդ տուրքանքն աւելորդ է: Գիտցուած բան է արդէն որ ուղղակի տրոց վրայ բնաւ տուրքանք չզրուիր, եւ զայն պաշտպանողները կըսեն թէ ուրիշ կառավարութիւններ զանի հաւաքելու միջոցներ ունին եւ մենք չունինք: Բայց մենք ալ գործով Պատրիարքարան զացողներէն անհատակ կառնունք իրենց բոլոր զիզեալ տուրքերն, այս ալ միջոց մ'է, ինչո՞ւ համար ուրեմն աւելի գումար մ'ալ պահանջենք, տարւոյն վերջը կամ հետեւեալ տարւոյն սկիզբը Պատրիարքարան եկած ըլլալնուն համար: Երդէն բոլոր գործով զացողները մէկմէկ տուրք կը վճարեն, ուղղակի տուրք ալ պիտի հատուցանեն, տուրքանք մ'ալ պահանջել մինչեւ այն ատեն վրձարած չըլլալնուն համար, արդարութեան եւ մեր ազգին վիճակին համաձայն չէ: Թէ որ պատիժ մը պիտի սահմանուի, անոնց համար կրնայ ըլլալ. որ իրենց կեանքին մէջ բնաւ տուրք չեն տար, բայց գործով զացողներն այս կարգէն չեն, եւ մենք ասոնց տուած պիտի ըլլանք պատիժը:

Ազգին մէջ եթէ մինչեւ ցարդ 300 անձինք կային ամեն տարի տուրք վճարող, այս թիւը 300 չկրցաւ ըլլալ ցարդ, ուստի զիւրութիւններ տալու է՝ որ տրոց հաւաքումը ընդհանրանայ, փոխանակ այսպիսի տուրքանք մը սահմանելու, որ անպատշաճ է:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս տուրքանքի կէտը հարկ էր որ լրջաբար ձեր խորհրդածութեան նիւթ դառնար, եւ եթէ վիճարանութիւնն երկարեցաւ, խնդիրը լուսաբանելու ծառայեց, եւ այլ եւս կրնաք խնդրոյն կատարեալ գիտակցութեամբը տալ ձեր քուէն:

Ունինք դեռ եւս երկու ատենաբան, որ խօսք ուղած են, բայց ըստ որում ժողովն անհամբերութեան նշաններ ցոյց կուտայ խնդիրը քուէարկելու համար, ուստի նախ վիճարանութեան փակուը քուէի կը զնեմ:

Հետեւապէս Ատենապետ փաշան վիճա-

բանութեան փակուը քուէի կը զնէ, եւ ժողովը միաձայն կ'ընտրուի զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժամ է արդ որ քուէարկէք բուն խնդիրը կարծիք մը կայ, որ կուղէ այդ խնդրոց յօդուածը անփոփոխ ընդունիլ, ուրիշ կարծիք մը բարեփոխում կառաջարկէ, այն կերպով որ քառորդ մէծիւմ մ'աւելի առնուի իւրաքանչիւր յապաղեալ բաժնի համար, բայց ասանց այս գումարին քանակութիւնն ամի ամի կրկնուելու, կարծիք մ'ալ կայ, որ այս տուրքանքի կէտն առ այժմ ծրարքէն ի բաց հանել, եւ նոր գրութեան գործադրութեան էլքը տեսնելէ ետեւ եթէ հարկ ըլլայ զայն յուզել, այն ատենին վերապահել կառաջարկէ. խոյ վերջին կարծիք մը, որու հետ է Համարակալութեան զիւանն, բոլորովին կը մերժէ այս տուրքանքը: Այսքան կարծիքներու մէջ ելք տալու համար խնդրոյն հարկ է որ նախ սա քուէի զնեմ թէ ժողովը կրնա՞նք արդեօք տուրքանքի սկզբունքն, եւ այս քուէին արդիւնքէն ետեւ կրնան մի առ մի միւս բարեփոխումներն անցնիլ կրկին ձեր քուէին:

Հետեւապէս Ատենապետ փաշան քուէի կը զնէ խնդիրն այս ձեւով, եւ ժողովը՝ 13 քուէի ընդդէմ՝ 18 քուէով կ'ընտրուի տուրքանաց սկզբունքն, եւ ընդ նմին խնդրոց յօդուածը, որ կը ջնջուի գլխովին ծրարքին մէջէն: Ժողովը կանցնի յաջորդ յօդուածին:

Յօդ. 10. Քաղաքական գործոց համար ի Պատրիարքարան կամ Առաջնորդարան կամ ի Թաղ. խորհրդարան զխնդ ազգայինն պարտի նախ վճարել իւր յապաղեալ տուրքը եթէ ունի, ըստ տրամադրութեան Թ. յօդուածին, եւ ապա իւր գործին անօրէնութեան իրաւունքը վայելել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Կառաջարկեմ որ փոխանակ քաղաքական գործոց համար եկողներէն միայն իրենց յապաղեալ տրոց վճարումը պահանջելու, քաղաքական եւ այլ ուրիշ գործոց համար եկողներէն պահանջուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ բարեփոխումը քիչ մը ծանր է, ուստի ճշդել հարկ է

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Փոխանակ ըսելու այս կամ այն գործի համար եկողներէն պահանջելու է, պէտք է որ եւ է գործի համար եկողներէն ըսել եւ անցնիլ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Ետ կ'առնում առաջարկս, զի կը տեսնեմ որ ժամանակը չէ եւ ուրիշ ատենի կը վերապահեմ:

ՄԷՐԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կառաջարկեմ որ պարզապէս սա բառերով զրուի «Ազգային իրաւունք մը վայելելու համար ի Պատրիարքարան կամ Առաջնորդարան եւ կամ ի Թաղ. խորհրդարան զխնդ ազգայինն պարտի վճարել իւր յապաղեալ տուրքն եւ ին.»

ՓԱՓԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — (Տեղեկարար Համարակալութեան զիւանի) Այդ քաղաքական բառը նոր չէ, այլ նոյն խոյ նախորդ կանոնագրին մէջ ընդունուած բառն է: Այդ ձեւով բացատրուելուն պատճառն այն է որ կրօնական իրաւունքներն ալ ի միասին չը հասկըցուին:

ԳԱՐԱԲԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ես ազգային իրաւունք բառերը գործածելը պատշաճ չեմ գտներ, այլ լաւագոյն կը համարիմ կամ յօդուածին այդ տողն իւր վիճակին մէջ պահել, կամ որ եւ է ազգային գործոց համար բառերը զնել:

ՄԷՐԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Շնորհք ըրէք բացատրել թէ որն է քաղաքական գործըն, եւ որն է ազգայինն, որպէս զի լուսաւորուինք:

ԵՆՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ժողովն խնդրոց յօդուածը մերժած ատենն գլխաւորաբար սա խնդիրը կը յուզուէր թէ գործով Պատրիարքարան զխնդները պարտաւոր պիտի լինին արդէն, զիզեալ տուրքերը վճարելու, եւ այս յօդուածը բաւական կը համարուէր, ուստի

պէտք էր որ գոնէ այս յօդուածը խիստ ըլլայ եւ ամեն գործոյ համար եկողները պարտաւորին զիղեալ տուրքերը հատուցանելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քաղաքական գործոց եւ ազգային իրաւունքի մը վայելման համար բառերը եթէ գործածուին, կարծեմ բաւական են :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գործով Պատրիարքարան եկողները պարտաւոր պիտի ըլլան իրենց պարտքը հատուցանելու, կըսէք, բայց որոշել պէտք է թէ ի՞նչ տեսակ գործոյ համար, քաղաքակա՞ն, ազգայի՞ն, կրօնական՞ն եւն. ասոնց պարտութիւնները ճշդել հարկ է, այս կէտին վրայ ամփոփեցէ՛ք, կ'աղաչեմ, վիճարանութիւնը :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ազգային իրաւանց մէջ՝ քուէի կէտն ալ կայ, բայց քուէն զբամով կրնայ վաճառուիլ, — ո՛չ, ուստի պէտք է ազգային իրաւանց մասը գուրս թողուլ, եւ քաղաքական գործոց համար եկողները հարկազրկ վճարելու :

ԱԼԻՔԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ գործերուն տեսակը որոշելու ելնենք, շատ կորուստներ կրնանք ունենալ, ուստի կառաջարկեմ՝ որ եւ է գործոց համար զիմողներէն պահանջելի է ըսել, եւ Վարչութեան խոհեմութեանը յանձնել որ ինք որոշէ թէ ուսկից առնել պէտք է :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Այդ առաջարկութիւնն ըրի ես արդէն, բայց կը տեսնեմ որ ինչորք ճապաղիլ կսկսի, ուստի ուրիշ նիստի մը թողունք :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ Վարչութեան ձեռքն այնպիսի օրէնքներ տրուին որ լաւ սահմանուած չլինին, կրնան զեղծմանց դուռ բանալ, ուստի չեմ ընդունիր Այլքսանեան էֆէնտի առաջարկը :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — (Ի զիմաց Քաղժողովոյ) Վարչութիւնը Քաղաքական բառը ընդունելով նպատակ ունի կրօնականն ի բաց թողուլ, եւ անկէ գուրս գործոց համար՝ պահանջել տուրք : Վարչութիւնն ինք ամենէն առաջ անյարմար կը տեսնէ կրօնական գործերն այս օրէնքին ենթարկել, բայց ազգային իրաւանց մէջ այնպիսի գործեր կան՝ որոնց համար կրնայ պահանջուիլ. օրինակի համար, կալուածական առուծախի իմուխապէր առնելու գործը : Վարչութիւնը չուզեր նաեւ որ իւր ձեռքն երկզիմի եւ տարտամ օրէնքներ յանձնուին, այլ ընդհակառակն կուզէ որ լաւ գծուած ըլլան, որ կարենայ ճշգիւ գործադրել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկաբեր Համարակալութեան զիւանին) Պահ մ'առաջ Քափամածեան էֆէնտին կըսէր թէ քուէն զբամով չվաճառուիր. կարճ պատասխան մը տամ իրեն : Քուէն՝ ազգային իրաւունք մ'է, ով որ իւր ազգային պարտաւորութիւնը կը կատարէ, այն է իւր պարտքը կը հատուցանէ, իւր իրաւունքն ալ կրնայ վայելել, իսկ այն որ չը հատուցանէր, չկրնար իրաւանցը տէր լինիլ : Ըսող եղաւ թէ՛ քանի որ իններորդ յօդուածը ջնջուեցաւ, գոնէ այս յօդուածն որքան կտրելի է պէտք է խտտապահանջ ըլլայ : Ի բաց ամենելով զուստ կրօնական խնդիրներն, ազգային իրաւունք բառերուն մէջ ամեն տեսակ գործեր կը ըզմանակին, եւ այս բացատրութեամբ կրնայ վերջանալ ինչորքն, ատենտագրութեան մէջ անցնելով ինչ որ ժողովը խորհած է այս կէտին վրայ :

Տ. ՏՈՎՆ. ՔՂԱՆԱՅ ՄԿԻՆԱՆ. — Որ եւ է գործոյ համար՝ Պատրիարքարան զիմողներէն ազգային տուրք առնելու խնդիրը նոր չէ, այլ ժամանակաւ առաջարկուած, եւ տիրոջ կանոն եղած է այժմ Պատրիարքարանի մէջ, այնպէս որ՝ բարեւ տուողին նաեւ ազգային տուրքը կը պահանջուի թէ՛ մը տեսակ գործերու առթիւ պիտի առնուի այս տուրքը, Տեսուսական եւ Երմտական պաշտօնէից խոհականութեան յանձնուած է ցարդ : Սակայն միշտ լա-

ւագոյն է գործերուն տեսակը ճշգիւ որոշել եւ յանուանէ նշանակել կանոնին մէջ, որպէս զր չվոթութիւն չպատահի եւ խնդիր յուղելու առիթ չմնայ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ես ալ Մկրեան հօր ըսածին մօտ բան մը պիտի ըսէի. այդ տասներորդ յօդուածին խմբագրութիւնը տարտամ է, եւ այնպիսի բացատրութիւն մը պէտք է որ տարտամ եւ կլասիք չըլլայ : Ուստի լաւագոյն է Մկրեան հօր ըսածին պէս տեսակները մի առ մի թուել, ինչպէս այս տեսակ կանոններու մէջ կրնեն նոյն ձեւով :

ՉԷՐԱԶ. Գ. ԷՖ. — Իմ կարծիքս այն է որ եթէ տասներորդ յօդուածին առաջին տողին մէջ՝ քաղաքական գործոց բառերուն տեղ, անձնական գործով բառերը գրուին, կրնան բաւական ըլլալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրինակի համար մէկուն դէմ բողոք պիտի բառնամ, այս ալ անձնական գործ է, տուրքս պիտի պահանջուի՞ : Գարձեալ այդ բացատրութիւնը բաւական չթուիր ինձ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Պահ մ'առաջ ժողովը չուղեց յապաղեալ տրոց համար աւելի գումար մը պահանջելու տրամադրութիւնը պահել եւ ծրագրին Գրգ. յօդուածը մերժեց, նպատակ չունիմ անոր դէմ խօսելու եւ իրաւունք ալ չունիմ. բայց 10 ըդ. յօդուածին վերայ արդէն խօսածներուս կարեւորութիւնը հասկցնելու համար հարկ կըլլայ զիտեղ տալ թէ՛ ինչ կը նշանակէր այն մերժման քուէն : Այն քուէին գործնական նշանակութիւնը պարզապէս սա էր թէ՛ իւրաքանչիւր ազգային անհատ երբ ազգային պաշտօնատանց զիմելու պէտք մ'ունենայ, պարտի նախընթաց տարիներէն իւր զիղեալ տուրքերը վճարել : Եւ անշուշտ քանի որ տուրքը ժամանակին չ'վճարողն ապագային անկէ աւելի պարտականութեան մը չպիտի ենթարկի, բնաւին մեղադրելի չէ զայն կանխաւ չ'վճարողը. վասն զի եթէ ժողովուրդը պարտաւոր է օրինաց տրա-

մագրութիւններն ի գործ դնելու, իրաւունք ալ ունի անոր ընծայած դիւրութիւններէն օգուտ քաղելու. հետեւաբար ժամանակին չվճարողն եւ գործ մ'ունենալուն սպասողն իւր այս իրաւունքը գործադրած պիտի լինի :

Այսու ամենայնիւ քանի որ այն յօդուածը մերժեց ժողովս, պէտք է գոնէ այս 10 ըդ. յօդուածը կարելի եղածին չափ՝ պարտաւորիչ ձեւի վերածել : Ուստի ահաւաստի իմ բարեփոխումս, զոր կաղաչեմ ըջօրէն ուշադրութեան առնուլ բարեհաճիք :

« Երմտական տարւոյն մէջ իւր տուրքը « չվճարող անհատն՝ որ եւ է պարագայի մէջ « իւր ազգային իրաւունքը վայելելու համար « պարտի իւր յապաղեալ տրոց գումարը վը- « ճարել նախապէս » :

Այս տրամադրութեան դէմ առաջարկեցին թէ՛ յանցելուն փորձուած է, բայց դժուարութեանց եւ անպատեհութեանց տեղի տուած է : Ես կը կարծեմ թէ՛ շատ ճիշդ չըլլար այսուհետեւ ըլլալիքն անցելոյն յար եւ նմանն ենթադրել : Անցելոյն անպատեհութիւնը բուն իսկ խնդրոյն հիմանը մէջ էր :

Մենէ շատեր պէտք է զիտնան եւ յիշեն թէ 1870 ին երբ Ազգային ժողովը կը վերակազմուէր, Ազգ. վարչութիւնն ըստ իւր պարտաւորութեան սպասելով հանդերձ որ Ազգ. ժողովը բացուած ատեն՝ Ազգ. տրոց օրէնք մը սահմանուի. Կեդրոնական սնտուկին անհրաժեշտ պէտքերը հոգալու համար առ ժամանակեայ կերպիւ թերհաշիւ տուրք հաւաքելու եղանակը սահմանեց եւ Սահմանադրութեան մէջ նշանակածին համեմատ երեսփոխանական ընտրողներէն առ հասարակ տարեկան 75 զրգ. թերհաշիւ տուրք առնուլ որոշեց. եւ ըստ որում այս գործողութիւնը հաւաքիչներու ձեռք կը կատարուէր այն ատեն եւ այն զըրութիւնն անբաւական էր գործն ի գլուխ հանելու, վարչութիւնն եկաւ արտօնութիւն խընդրեց որ գործով Պատրիարքարան զիմողներէն նախ իրենց յապաղեալ տուրքերը պահանջէ եւ ապա գործերնին տնօրինէ : Տարակոյս չկայ որ այն ատեն ո՛չ Վարչութեան մտքէն կանցնէր եւ ո՛չ ալ ժողովիս թէ՛ այս տնօրէնութիւնը երկար տարիներու համար գործադրելի պիտի

լինէր, վասն զի նոյն իսկ թերհաշիւ տրոց հաւաքումն առ ժամանակեայ խնդիր մ' էր: Կժբաղդաբար տրոց օրէնքը տարիներով յապաղեցաւ եւ Պատրիարքարանը պարտաւորեցաւ իրեն զիմոզներուն յապաղեալ տրոց վըճարումը պահանջելու գրութիւնը շարունակել այնչափ, որ երբեմն հազարաւոր զրշ. ի գումարներ պահանջել հարկ եղաւ գործով ի Պատրիարքարան եկողներէն. այս վիճակն իրաւամբ տեղի կուտար դանգատանաց, եւ մեծ անպատեհութեանց առիթ կը ընծայէր: Բայց այժմուքուէարկած օրէնքնիս այդ շանստեհութեանց տեղի չթողուր, վասն զի նախ բաժինը 20 զրշ. է, մայրաքաղաքիս համար եւ 10 զրշ. գաւառաց համար, որ ամենէն չափաւոր վիճակ ունեցողներուն ալ զիւրատար է, երկրորդ՝ հաւաքումը Թաղ. խորհրդոց ձեռք պիտի կատարուի, որով խիստ հազուադէպ կը լինի տարիներով տրոց վճարումը յապաղել, հետեւաբար աւելորդ կը լլայ կարծել թէ դժուարութեանց եւ անպատեհութեանց տեղի տըռուած լինի:

Առարկեցին դարձեալ թէ երբ Ազգ. իրաւանց վայելման համար նախապէս յապաղեալ տրոց վճարումն պայման ցուցուի, եւ քուէարկութեանց պահուն ալ այս պայմանն ի գործ գրուի, քուէն ստակով ծախել կը նշանակէ:

Քուէն այն ատեն ստակով ծախուած կը լլայ, երբ Ազգ. տուրք վճարելու համար նիւթական կարողութիւն չունեցող բայց բարոյական արժանեաց եւ ընտրողութեան հանդամանաց տէր եղող ազգայնոյն քուէն մերժուի ու ընտրողութեան հանգամանքներէ զուրկ բայց ազգային տուրք վճարելու չափ գրամ ունեցող մարդուն քուէն ընդունուի: Բայց երբ այսպէս չըլլար, եւ Ազգ. տուրք վճարելու կարող ազգայինէն կը պահանջուի որ նախ իւր տրոց մասնակցութեան պարտաւորութիւնը կատարէ եւ ապա ընտրողութեան իրաւունքը վայելէ: ասի իրաւանց եւ պարտուց անբաժան լինելուն սկզբունքը պաշտպանել է որոյ վրայ գրուած են մեր Ազգ. Սահմանագրութեան հիմունքը:

Աստի ո'վ որ Ազգ. տրոց մասնակցութենէն խոյս տալու համար առարկէ թէ կանխաւ ինչ

տրոց վճարումը պահանջելը քուէն ստակով ծախել կը նշանակէ, ասի զատ գրարանութիւն կը լինի եւ բնաւին շտաբի չկրնար ըլլալ:

Առարկեցին նաեւ թէ՛ ազգային իրաւունք բառերուն մէջ կը հասկըցուին կրօնական պէտքերն ալ: Ես այդպէս չեմ հասկընար, եւ կարծեմ թէ պէտք չէ այդպէս հասկըցուի. եկեղեցին պարտաւոր է միշտ իւր զուակաց կրօնական պէտքերը հողալու, ամեն անգամ որ իրեն զիմն, Վերջապէս առանց երկարելու, սաշափ միայն զիտել կուտամ թէ՛ ամեն անոնք որ առիթ ունեցեր են կեդրոնական մտտուկի հասութից ազդուները քննելու, անտարակոյս կը համաձայնին ինձ հետ որ այս կէտը շատ քրքրելին իմաստուն գործ մ' եղած չըլլար. հետեւաբար քանի որ այն ակնարկեալ իրաւունքներն ալ իբր ազգային իրաւունք ճանչցուած են ցարդ, իմ բարեփոխման պարունակած ազգային իրաւունք բառերը բաւական եւ յարմարագոյն պէտք է համարուին մեզ համար, ներկայ խնդրոյն մէջ:

Հետեւապէս կը պնդեմ, ներկայացուցած բարեփոխմանս վրայ եւ կառաջարկեմ ժողովիդ քուէարկել զայն, փոխան ծրագրին 10 զրշ. յողուածին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս յողուածը կարծուածէն շատ աւելի վիճարանութիւն գրգռեց, եւ ամեն կողմէ կարծիք մը, առաջարկ մը եւ բարեփոխում մը կայ, իսկ ժողովը դեռ եւս եւ ոչ մէկ մէկին համոզուած կերեւի, եւ այսքան հակընդդէմ կարծիքներու հոսանքին մէջ չէ կարելի հասուն կերպով առաջնորդել խնդիրն իւր որոշմանը: Օրէնքը կը նախատեսէ այս վիճակը, եւ կը տրամադրէ վերադարձնել կրկին այսքան վիճարանութիւն գրգռող յողուածը առ նախաքննիչ զիւանն, եթէ՛ սա ուզէ. որպէս զի ժողովին տրամադրութիւնները, կարծիքները նկատողութեան առնու, եւ անոնցմէ առաջնորդուելով կրկին խմբագրէ յողուածը:

Արդ՝ եթէ կը հաճիք օրէնքին այս տրամադրութիւնն ի գործ դնելով կը վերադարձնեմք յողուածը Համարակալութեան զիւա-

նին ի կրկին խմբագրութիւն, մանաւանդ որ օրն տարածամած է, եւ այլ եւս կարելի չէ շարունակել վիճարանութիւնը:

Ժողովը կը հաւանի Ատենապետ փաշայի առաջարկութեան եւ ծրագրին 10 զրշ. յողուածը կը Վ.Ն.Ր.Ա.Ր.Ձ.Ն.Է կրկին Համարակալութեան զիւանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենանը վակելէ առաջ՝ Ձեր ուշադրութեան կը ներկայացնեմ ուրիշ խնդիր մը: Մեր ընկերներէն մին՝ Ալաճաճեան էֆէնտի, կը յիշէք որ ժողովոյս վերջին նիստերէն միոյն մէջ հրաժարական տուաւ բողոքանօք եւ մեկնեցաւ ժողովէն: Իւր հրաժարականը գրաւոր չէր, եւ անակնկալ, եւ ժողովն այդ մասին որոշում մը չտուաւ, զիւանը կը շարունակէ անոր կոչնագիրը յուղարկել ամէն նիստի, սակայն նա եւս հրաժարեալ եմ ըսելով մինչեւ իսկ կոչնագիրը չը բանար. եւ որովհետեւ ժողովն հրաժարականն ընդունած չէ, զիւանն ալ կը շարունակէ: Թէ զիւանն եւ թէ Ալաճաճեան էֆէնտի իրենց իրաւունքներն ունին, բայց պէտք է որ ժողովը վերջ տայ այս վիճակին, եւ մաքրէ այս գործը:

Ժողովը սոյն խնդիրը յառաջիկայ նիստին կը ԹՈՂՈՒ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք որ ուրիշ պարագայ մ' ալ յիշեմ, եւ փակեմ ատ-

եանը: Քանի մը կարեւոր խնդիրներ յղուած են Նախաձեռնութեան զիւանին, ինչպէս է թիւլակնտեան էֆէնտի բողոքագիրն եւ ինքայն դեռ չբերաւ մեզ իւր քննութեան տեղեկագիրը: Այս երկարաձգումը ծանր է, ուստի կը խնդրեմք Նախաձեռնութեան զիւանէն որ այս խնդիրներուն տեղեկագրերը մինչեւ առաջիկայ նիստ բերել չնորհ ընէ:

Ատենանը կը գոցուի ժամ 10 ին:

Ժողովն յաջորդ նիստին Օրակարգ կորոչէ:

Ա. — Խնդիր Ազգային ուղղակի տրոց. — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ Համարակալութեան զիւանի տեղեկագրոյն:

Բ. — Խնդիր վերաքննութեան Սահմանագրութեան. — Վիճարանութիւն ի վերայ Նախաձեռնութեան զիւանի տեղեկագրոյն:

Գ. — Խնդիր Ղալաթիոյ Թաղեցւոց վիճարանութիւն ի վերայ տեղեկագրոյն Մայր զիւանի:

Ատենաղպիւր	Ատենապետ
Մ. ՄԷԼԻՔԵԱՆ	Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԾԱՆՈԹ. — Սոյն նիստի Օրակարգի առաջին խնդիրն, որ էր հրաժարական թորհրդարանական Յանձնխմբի, տպագրական վրիպակաւ ի բաց թողուեր է, ատենագրութեանս սկիզբն արձանագրեալ Օրակարգէն, ուր պէտք է առաջին տեղը գրաւէ, հետզհետէ միւս խնդիրներն իրենց կարգաւ:

ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ.	Մկրտիչ	Ս. Արքեպս.	Խրիսեան	Ա. Արեւուդէր
2	Տ.	Խորէն	Ս. »	Նար-պէյ	
3	Տ.	Կարապետ	Ս. Եպս.	Սերոյբեան	
4	Տ.	Մատթէոս	Ս. »	Իզմիրլեան	Բ. Արեւուդէր
5	Տ.	Ամբրոսիոս	Ծ. Վրդ.	Ռուբինեան	
6	Տ.	Գարեգին	Ծ. »	Թաթարեան	
7	Տ.	Եղնիկ	Ծ. »	Ապահունի (Առաջ. պաշտօնի. զուրս	
8	Տ.	Իզնատիոս	Ծ. »	Շիշէճեան	զացած)
9	Տ.	Հմայեակ	Ծ. »	Դիմաքսեան	
10	Տ.	Ներսէս	Ծ. »	Ասլանեան	
11	Տ.	Պօղոս	Ծ. »	Խօլտամեան	
12	Տ.	Արիստակէս	Աւագ Բհնյ.	Մամբրեան	
13	Տ.	Խորէն	»	Փէհլիվանեան	Բ. Արեւուդէր
14	Տ.	Սահակ	»	Տ. Սարգիսեան	Ա. Արեւուդէր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	էֆէնտի	Ալթուն Տիւրքի	Ա. Արեւուդէր
2	Գէորգ	»	Ստիմարաճեան	Ա. Արեւուդէր
3	Գէորգ	»	Գրլլըճեան	
4	Գարրիէլ	»	Եսայեան	
5	Լօղօֆէթ	»	Պալեօղեան	
6	Աբել	»	Կիւպէնկեան	(Հրաժարեալ)
7	Մարտիրոս	»	Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	»	Ֆրէնկեան	
9	Յակոբ	»	Զօսանեան	
10	Ղազարոս	»	Հովուեան	(Հրաժարեալ)
11	Սահակ	»	Ղազարոսեան	
12	Յակոբ	»	Ծերունեան	(Հրաժարեալ)
13	Ստեփանն	»	Պէյլիկճեան	Բ. Արեւուդէր
14	Խաչատուր	Խան	Տ. Նէրսիսեան	

ՎԵՐՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐՏԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ

1	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	1
2	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	2
3	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	3
4	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	4
5	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	5
6	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	6
7	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	7
8	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	8
9	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	9
10	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	10
11	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	11

Գին 2 պրոչ

ՍԵՓԷՍԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՂՈՆՍԿԱՆ ՄԱՐՏՈՒԿԻՆ

1	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	1
2	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	2

ՍՁԳՍՅԻՆ ԴՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅՍՏԿԱՅԵՍԻ

ՄԱՐՏԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ

1	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	1
2	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	2
3	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	3
4	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	4
5	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	5
6	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	6
7	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	7
8	Ստեփանոս Բ. Ստեփանոս	Ստեփանոս Բ. Ստեփանոս	2	8

(Ստեփանոս Բ.)

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Էջմիածնի Ս. Լուսաւորիչ

(Ստեփանոս Բ.) Եկեղեցւոյ բանկայը Էջմիածնի գրադարանաց բով

(Ստեփանոս Բ.) Ստեփանոս Բ. Ստեփանոս

(Ստեփանոս Բ.) Ստեփանոս Բ. Ստեփանոս